

2150

13369

ՈՒՐՈՒՍԳԻԾ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ



13369



ՈՒՐՈՒԱԳԻԾ

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.— Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Առաջնորդութիւնն անբաժան եւ միացեալ մասն է Հայաստանի Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Յօդ. 2.— Ամերիկայի Հայ Առաջնորդութիւնը կընդունի Հայ Առաքելական Եկեղեցւոյ կանոնական եւ իրաւական Օրէնքներն ու կանոնները, կը ճանչընայ կրօնական եւ իրաւական խնդիրներու մէջ Ամե-նայն Հայոց Հայրապետութեան գերագոյն Իշխանութիւնն ու իրաւունքներն եւ կը հնազանդի Անոր, անկէ ընդուելով իւր իրաւասութիւնն ու իշխանու-թիւնը:

Յօդ. 3.— Ամերիկայի մէջ գտնուող Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Ընդհանուր Հոգեւոր Հովուութեան Պաշտօնը, հաստատուած 1889, Յունիս 13-ին, Պատրիարքական թիւ 37 Կոն-դակով, վերածուած է ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ըստ Օրհնածիր Կոնդակի Ն. Սրբութեան Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Սրբազնակառար ԿԱՌՈՂԻԿՈՍԻ յ2ն Յուլիսի 1898:

151  
13369

Սահմանադրութեան Ուրուագիծը, ըստ խընդ-րոյ Երեսփոխանական Ժողովոյ 1922 թ. կազմուած է Առաջնորդ, Գեր. Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի կող-մէ:

Ներկայացուած է ի քննութիւն Կեդր. Վարչու-թեան եւ անցած անոր խորհուրդէն եւ հաւանութե-նէն:

Պիտի ներկայանայ Երեսփոխանական Ժողովին ի քննութիւն:

Յօդ. 4.— Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը կը կազմէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսական վիճակներէն մին, եւ կը կառավարուի Ամենայն Հայոց Հայրապետութեան դերագոյն հեղինակութիւնն ու իշխանութիւնը ճանչցող, ընդունող եւ Մայր Աթոռի մէջ ձեռնադրութիւն ստացած Արքեպիսկոպոսի կամ Եպիսկոպոսի ձեռքով:

Յօդ. 5.— Ամերիկայի Հայոց Առաջնորդի պաշտօնական տիտղոսն է Առաջնորդ Հայոց Ամերիկայի (Primate of the Armenian Apostolic Church in America) որի հոգեւոր տեսչութեան եւ իշխանութեան կ'ենթարկուին Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող եւ կամ կազմուելիք բոլոր եկեղեցիները, Փոխանորդութիւնները, քարոզիչները, հովիւները, եկեղեցական հոգեւոր եւ աշխարհիկ ամէն կարգի, աստիճանի, պաշտօնի անձինք, ինչպէս եւ եկեղեցական ամէն կարգի, շարժական ու անշարժ, սեփականութիւնք:

Յօդ. 6.— Ամերիկայի Հայոց Առաջնորդական վիճակին վերաբերեալ Եկեղեցական-Վարչական-Տնտեսական եւ այլ խնդիրները կը տնօրինուին հասանութեամբ եւ դիտութեամբ Առաջնորդի եւ գործակցութեամբ Եկեղեցական պաշտօնեաներու, Վարչական մարմիններու, որոնց իւրաքանչիւրի ընտրութեան, իրաւասութեան, կազմութեան, փոխյարաբերութեան սահմանները գծուած են ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆՍ մէջ:

Յօդ. 7.— Ամերիկայի Առաջնորդութեան Վարչական Կազմն է ա) Առաջնորդ, բ) Երեսփոխանական Ժողով, գ) Փոխանորդներ, դ) Հոգեւոր Հովիւներ, ե) Կեդրոնական Վարչութիւն, զ) Ուսումնական Խորհուրդ, է) Թեմական Ժողովներ, ը) Հոգաբարձութիւնք եւ թ) Գործակալք:

Յօդ. 8.— Ամերիկայի Հայոց Առաջնորդական վիճակի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ պարտադիր է իւր բոլոր պաշտօնեաներու համար, որոնցմէ իւրաքանչիւրը պաշտօնի անցնելու ժամանակ պարտաւոր է հնազանդութեան եւ անսայթաք կատարման երզու-

մըն տալ Սահմանադրութեանս, գրաւոր կերպով, (տես Ձեւ Ա., Բ. եւ Գ.):

Յօդ. 9.— Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան ընդհանուր գործերու մէջ Ձայնի եւ Քուէի իրաւունք ունին, ինչպէս եւ պարտականութեանց կատարման պարտիք, նոյն Առաջնորդական վիճակի բոլոր Առաջնորդական եւ Հովուական Թեմերը, որոնց ամէնքի համար պարտադիր է ներկայ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ անթերի եւ ճիշտ կատարումը:

Յօդ. 10.— Ամերիկայի Առաջնորդութեան իրաւասութեան տակ գոնուած բոլոր վայրերը, որ իրենց մերձաւոր հայաշատ կեդրոն քաղաքի մը մէջ Եկեղեցի, Մատուռ, Աղօթատեղի ունին եւ կրնան մնայուն հովիւ մը պահել, այդպիսի համայնքները կը կոչուին Հովուական Թեմ:

Իսկ այն բոլոր վայրերը, որ կամ հեռու են այդպիսի կեդրոններէ, եւ կամ Եկեղեցի, Մատուռ, Աղօթատեղի եւ Հովիւ պահելու հնարաւորութիւն չունին, կը նկատուին Առաջնորդական Թեմ:

Առաջիններու հոգեւոր մատակարարութիւնը կը կատարուի տեղական Հովուի ձեռքով եւ միջոցով, երկրորդները իրենց հոգեւոր մատակարարութիւնը կատանան Առաջնորդարանի կողմէ:

Յօդ. 11.— Հովուական Թեմերու մեծ ու փոքր համայնքներու մէջ գոնուած Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակաց անունները կարձանագրուին Հովուական Կեդրոնի Եկեղեցւոյ Անձնահամարի Տոմարին մէջ:

Առաջնորդական Թեմերու վայրերու համայնքներունը կարձանագրուին Առաջնորդարանի Անձնահամարի Տոմարի մէջ:

Այդ Տոմարները իւրաքանչիւր երկու տարին անգամ մը կատուգուին տեղական Հոգաբարձութեանց կամ Գործակալութեանց միջոցաւ:

Յօդ. 12.— Իւրաքանչիւր Հովուական Թեմ, իւր ներքին գործերու կառավարութեան համար պէտք է ունենայ իւր առանձին ներքին կանոնադիրը, զոր կ'պատրաստեն Հովիւը եւ Թեմական Խորհուրդը եւ կամ Հովիւն ու Հոգաբարձութիւնը, կամ անոնցմէ

ընտրուած Յանձնախումբ մը:

Ներքին կանոնադիրը չի կրնար շեղումներ ունենալ Սահմանադրութեանս ուղղութեանն և ոգիին:

Յօդ. 13.— Կանոնադիրը մշակուելէ յետոյ կանցնէ Թեմական Խորհուրդի եւ կամ Հոգաբարձութեան ջննութեան, կառաջարկուի ժողովուրդի անդամական ժողովի հաւանութեան եւ ապա կը ներկայացուի Առաջնորդի հաստատութեան: Ոչ մի կանոնադիր գործադրութեան չի կրնար անցնիլ առանց Առաջնորդի հաւանութեան:

Առաջնորդն իրաւունք ունի Կանոնադրութեան մէջ կարեւոր փոփոխութիւններ մտցնելու ըստ ուղղութեան Սահմանադրութեան եւ այնպէս հաստատելու:

Ծանօթ.— Առաջնորդն, իրաւունք ունի ընկալեալ կանոնադրութեանց հիման վրայ նոր եւ մշակուած կանոնադրութիւններ հաստատելով տալ ի գործադրութիւն Ընկերութեանց, Միութեանց եւ Հաստատութեանց:

Յօդ. 14.— Առաջնորդական Թեմերու համար ներքին Կանոնադրութիւն կտրուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, հաստատութեամբ Առաջնորդի:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՌԱՋՆՈՐԴ

Յօդ. 15.— Ամերիկայի Հայոց Առաջնորդն իրեն հաւատացած եւ յանձնուած Հօտին յարաբերութեան միջնորդը եւ միանգամայն պատասխանատու Անձն է Ազգային Հոգեւոր Բարձրագոյն Իշխանութեան, որ է Ս. Էջմիածնի Մայր Աթոռի Ամերնայն Հայոց Հայրապետը, որուն եւ կ'ենթարկուի նա:

Յօդ. 16.— Ամերիկայի Հայոց Առաջնորդը կընտրուի Երեսփոխանական Ժողովէն, ըստ տրամադրութեան Սահմանադրութեան, եւ կը հաստատուի Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն առանձին Օրհնութեան Կոնդակով:

Վեհ. Հայրապետին վերապահուած է ընտրու-

թեան վաւերացումն ու հաստատութիւնը ընտրուածի:

Յօդ. 17.— Ամերիկայի Հայոց Առաջնորդն ի պաշտօնէ ներկայացուցիչն է Ամենայն Հայոց Հայրապետին, Նախագահն է Ազգային Եկեղեցական բոլոր գումարումներու եւ ժողովներու, Երեսփոխանական գումարմանց, Կեդրոնական Վարչութեան, Վերին Հսկողը Առաջնորդական եւ Հովուական բոլոր Թեմերու, Հոգեւոր պաշտօնեաներու, Հոգաբարձութեանց, Եկեղեցիներու ամէն տեսակ գործերու, միանգամայն եւ գործադիր իշխանութիւնը Սահմանադրութեան եւ Վարչութեանց:

Յօդ. 18.— Ամերիկայի Հայոց Առաջնորդական Աթոռը երբ Թափուր մնայ ոեւէ պատճառով, Կեդրոնական Վարչութեան Ժողովէն ընտրուած Առաջնորդական Տեղապահը կը վարէ Առաջնորդական Իշխանութիւնն ու գործերը, մինչեւ նոր Առաջնորդի պաշտօնի դուրս անցնելը:

Յօդ. 19.— Առաջնորդական Աթոռի Թափուր ըլլալու, պատճառներու եւ նոր Տեղապահի ընտրութեան մասին Կեդրոնական Վարչութիւնն անմիջապէս պարտականութիւն ունի ղեկուցանել Ամենայն Հայոց Հայրապետին:

Վեհ. Հայրապետի իրաւասութեան ենթակայ է Տեղապահի պաշտօնի մէջ մնալը:

Յօդ. 20.— Տեղապահը պարտաւորութիւն ունի զիտութեամբ եւ գործակցութեամբ Կեդրոնական Վարչութեան յայտարարել տեղի ունեցած փոփոխութեան մասին եւ հրաւիրել Երեսփոխանական Ժողով նոր Առաջնորդի ընտրութեան համար, որ պիտի կատարուի ոչ ուշ քան չորս ամիս:

Յօդ. 21.— Եթէ Առաջնորդական Աթոռի Թափուր մնացած միջոցին Երեսփոխանական Ժողովի անդամներու կէսէն աւելին դրաւոր ցանկութիւն յայտնէ Առաջնորդի անմիջական ըտրութեան համար, Տեղապահը Կեդրոնական Վարչութեան հետ պարտականութիւն ունի անմիջապէս ընտրութեան գործի ձեռնարկել:

Յօդ. 22.— Կեդրոնական Վարչութիւնը եթէ ու-

նենայ այնպիսի յարմար ընտրելիներ, որոնց հաւանութիւնը ստացած է կանխօրէն, եւ Երեսփոխանական Ժողովն անոնց մասին առարկութիւն չունենար, անոնց վրայ կը կատարուի ըտրութիւնը, եւ ընտրեալ Առաջնորդի անունն կը տեղեկագրուի Ամենայն Հայոց Հայրապետին ի հաստատութիւն:

Յօդ. 23.— Եթէ Կեդրոնական Վարչութիւնը չունի ընտրելեաց ցանկ եւ Երեսփոխանական Ժողովն եւս չի կրնար ցանկ պատրաստել եւ ընտրութիւն կատարել, Երեսփոխանական Ժողովը կ'ընդրէ Ն. Ս. Օծութենէն կամ ընտրելեաց ցանկ մը ուղարկել, անոնց մէջէն ընտրութիւն կատարելու եւ կամ Ինք նշանակէ յարմարաւոր Անձն Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան պաշտօնին:

Յօդ. 24.— Ամերիկայի Հայոց Առաջնորդի առաջնորդանիստ քաղաքը եւ կեդրոնը պիտի ըլլայ առ այժմ Մասաչուսէց նահանգի ԲՈՍՏՈՆ քաղաքը, մինչեւ Երեսփոխանական Ժողովի կողմէն տարբեր տնօրէնութիւն ըլլայ:

Յօդ. 25.— Առաջնորդի պարտականութիւններն են.

Ա.— Հաւատարիմ ըլլալ եւ մնալ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Դաւանութեան, Վարդապետութեան, Աւանդութեանց, Կարգաց եւ Կանոնաց:

Բ.— Հնազանդ ըլլալ Ամենայն Հայոց Հայրապետի հրամանաց:

Գ.— Հսկել Սահմանադրութեանս անթերի եւ ճիշտ գործադրութեան:

Դ.— Կատարել տեղական եւ արտասահմանի Թղթակցութիւններ:

Ե.— Պահպանել բարեկամական կապ արտաքին եւ ներքին յարաբերութեանց:

Զ.— Հսկել պահպանելու

ա) Ամերիկայի մէջ պաշտօն վարող բոլոր եկեղեցական անձանց «Յուցակ Ծառայութեան»:

բ) Ամերիկայի մէջ գտնուող բոլոր Հայ եկեղեցու զաւակներու անձնահամարի վիճակագրութիւնը:

գ) Մկրտելոց, Ամուսնացելոց եւ Ննջեցելոց մանրամասն արձանագրութիւնն առանձին Տոմարներով Առաջնորդական եւ Հովուական Թեմերու մէջ եւ տալ պատկան վկայականները:

Ծանօթ.— Եթէ մկրտութիւններն, ամուսնութիւններն ու թաղումները ժամանակին, մոռացութեան եւ կամ ուրիշ պատճառով, մատեան չէ մուծուած եւ ապագային այդպիսի վկայականներու կարիքը կ'ըզացուի, Առաջնորդի կարգադրութեամբ կը կատարուի երգմնական քննութիւն խնդրի նկատմամբ եւ ապա կը տրուին պատշաճ վկայականներ:

դ) Եկեղեցեաց, Հովուութեանց, Համայնքներու, եւ Առաջնորդարանի Ելեւմտից հաշիւներու Մատեաններու ճշտութեան:

ե) Դատի տալ Հաշուական եւ այլ զեղծարարութեանց ու զեղծումներու պատասխանատու անձերն ու մարմինները:

զ) Կեդրոնական Վարչութեան Ժողովոց, ինչպէս նաեւ Երեսփոխանական եւ այլ գումարմանց, արձանագրութեանց պահպանութեան:

է.— Հող տանիլ Եկեղեցական սեփականութեան ապահովութեան, բարւոք պահպանութեան, խնամոտ չահագործութեան:

Ը.— Այցելել Առաջնորդութեան բոլոր Թեմերը գոնէ տարին անգամ մը.

ա) Տեղեկանալ Ժողովրդեան հոգեւոր կացութեան, ներքին պէտքերուն:

բ) Տնօրինել պատկան Ժողովներու միջոցով կարեւորը եւ հնարաւորը:

գ) Առաջնորդական իշխանութեամբ կարգադրել տեղական խնդիրները, վէճերը, երկպառակութիւնները:

դ) Հովիւներու, Հոգաբարձութեանց, կամ երկուքի մէջ եղած տարաձայնութիւններն առ տեղեան կարգադրել:

ե) Հսկել Հովիւներու տարբեր եւ իրենց չպատկանող Հովուութեանց մէջ պաշտօն, հոգեւոր մատակարարութիւններ չկատարելու, միմիանց իրաւասութեան սահմաններուն մէջ չմտնելու վրայ,

ի կարգ հրաւիրելով զանոնք իւր իշխանութեամբ :

դ) Տնօրինել այն ամէն խնդիրները, որ կը յանձնարարուին եկեղեցական պաշտօնական մարմնոյ կողմէ, կամ անհատներէ, եւ որ կը վերաբերին Առաջնորդի իրաւասութեան :

Թ.— Հովանաւորել եւ խրախուսել Եկեղեցասէր Հայուհեաց, Երիտասարդաց եւ Օրիորդաց, Կրթասիրաց, Դպրասիրաց եւ այլ ընկերութիւնները :

Ժ.— Հոգ եւ խնամք ունենալ միջոցներ ստեղծել, հայթայթել կարող, ձեռնհաս եկեղեցականներ պատրաստելու, Ազգային Կրթարաններու եւ օտար Աստուածարանական բարձրագոյն Կրթարաններու եւ Համալսարաններու մէջ :

ժԱ.— Հոգեւոր խնամք եւ հսկողութիւն ունենալ եկեղեցիներու հովանու տակ եղած Կիրակնօրեայ եւ այլ դպրոցներու մասին :

ժԲ.— Տարին անգամ մը Առաջնորդարանի վիճակի, ժողովրդեան ընդհանուր կացութեան մասին մանրամասն Տեղեկագիր պատրաստելով մատուցանել Ամենայն Հայոց Հայրապետին : Տեղեկագրին մէկ օրինակն եւս յանձնել Կեդրոնակա Վարչութեան ի նկատողութիւն :

Ծանօթ.— Կեդրոնական Վարչութիւնը, եթէ դիտողութիւններ ունի Առաջնորդի Տեղեկագրի մասին, իրաւունք ունի ղեկուցանել այդ մասին Ամենայն Հայոց Հայրապետին, պատճէն յղելով Առաջնորդին :

Յօդ. 26.— Առաջնորդի իրաւունքներն են .

Ա.— Անուան յիշատակութիւն եկեղեցական պաշտամանց եւ Ս. Պատարագի ժամանակ Վեհ. Հայրապետի յիշատակութենէն անմիջապէս յետոյ, ըստ ընկալեալ սովորութեան :

Ծանօթ.— Տեղապահի անուան յիշատակութիւն չի՛ կատարուիր :

Բ.— Ձեռնադրել Ամերիկայի Հայոց վիճակի համար յարմարաւոր եւ պատշաճ կրթական եւ բարոյական առաւելութիւններով օժտուած անձեր ,

ըստ խնդրոյ համայնքների եւ կամ Կեդր. Վարչութեան :

Գ.— Երջուն Հովիւներ ձեռնադրել օժտուած նոյն բարեմասնութիւններով, Կեդրոնական Վարչութեան հետ կանխօրէն անոնց տնտեսական հոգածութիւնն ապահովելով :

Դ.— Պարգեւադրել իւր վիճակի մէջ դանձրուած Հովիւներն, ըստ իւրաքանչիւրին արժանեաց, տալով Ծաղկեայ Փիլոնի, Խաչ կրելու իրաւունք, վարդապետներն տալ մասնաւոր իշխանութիւն, շնորհել քահանաներուն Աւագ-քահանայութեան տիտղոս :

Ե.— Միջնորդել Ն. Ս. Օծութեան ա) պարգեւադրելու իւր վիճակին մէջ դանձրուած վարդապետներուն շնորհելով ահանազու լանջախաչ, արտօնելով տալ արժանաւորներուն Ծ. Վարդապետութեան Աստիճան. բ) Ականաւոր, եկեղեցուն եւ ազգին պիտանի ծառայութիւն մատուցած անձանց համար Ս. Լուսաւորիչի շքանշան ըստ աստիճանաց :

Յօդ. 27.— Առաջնորդն իրաւունք չունի ուել պաշտօնեայ կամ պաշտօնէութիւն լուծեալ, դադարեալ հռչակելու, առանց անոնց նկատմամբ իրեն հասած, կամ իւր ունեցած բողոքները, դիտողութիւնները ձեռնհաս ժողովներու ներկայացնելու :

Ծանօթ.— Եթէ ուել հոգեւորական կամ աշխարհիկ պաշտօնեայ, ինչ կարգի, աստիճանի եւ պաշտօնի ալ ըլլայ, խոսվայոյց կամ դայթակղական ընթացք ունենայ, կամ Սահմանադրութիւնը ոտնահարէ, Առաջնորդն իրաւունք ունի ամիջապէս առժամանակեայ կերպով դադրեցնել զայն պաշտօնէն, վերջնական որոշումը թողնելով պատկան ձեռնհաս ժողովներու եւ կամ, եթէ խնդիրը ծանր է, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին :

Յամառող պաշտօնեաները կենթարկուին աւելի ծանր պատասխանատուութեան Առաջնորդի անմիջական կարգադրութեամբ :

Յօդ. 28.— Առաջնորդի անձին կամ պաշտօնա-

վարութեան դէմ եղած դանդառները պէտք է ըլլան գրաւոր եւ ուղարկուին Կեդրոնական Վարչութեան Դիւանին: Եթէ նկատողութեան արժանի խնդիրներ են, Կեդրոնական Վարչութիւնը կը քննէ այդ դանդառները, առանձին ժողով գումարելով այդ մասին: Եթէ իւր ձեռնահասութենէն վեր համարէ խընդիրը կը յանձնէ Երեսփոխանական Ժողովի իրաւասութեան, իւր տեղեկագրին հետ:

Յօդ. 29.— Ամերիկայի Հայոց Առաջնորդը իրաւունք ունի ունենալ եւ ստանալ իւր դիրքի, աստիճանի եւ պաշտօնի համապատասխան ա) Առաջնորդարան, բ) Ռոճիկ, դ) Ունենալ իւր Դիւանը եւ իւր Քարտուղարը, դ) Խորհրդատու Փաստաբանը:

Յօդ. 30.— Ամերիկայի Հայոց Առաջնորդարանը կը պահպանուի իւր տարեկան մուտքերով, որոնք են.

Ա.— Ընդհանուր Առաջնորդական Վիճակին մէջ կատարուած

- ա) Մկրտութեանց լուսադին,
- բ) Պսակներու Աթոռահաս,
- գ) Թաղման յիշելիք:

Բ.— Կամաւոր նուէրներ ազգային իւրաքանչիւր անդամէ, տարեկան առնուազն մի դոլարի չափով:

Գ.— Առաջնորդական եւ Հովուական Թեմերու տարեկան տուրք, ըստ որոշման Երեսփոխանական Ժողովոյ եւ կարգադրութեան Կեդրոնական Վարչութեան:

Դ.— Կալուածներու եկամուտ:

Ե.— Կտակներու եկամուտ:

Զ.— Առաջնորդական Թեմ նկատուած վայրերու եկեղեցական եւ պատահական տուրքերը:

Է.— Առաջնորդարանի վաւերացման ենթակայ պաշտօնագրերու, վկայականներու, վկայաթղթերու (Application, Affidavit) վաւերացման տուրք:

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 31.— Երեսփոխանական Ժողովն Ամերիկայի մէջ գտնուած Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Ժողովրդեան ներկայացուցիչ Մարմինն է:

Յօդ. 32.— Երեսփոխանական Ժողովը մնայուն Մարմին է եւ չկրնար լուծուիլ, այլ փոփոխութեան կ'ենթարկուի անոր կազմը:

Յօդ. 33.— Երեսփոխանական Ժողովը կը կազմուի Առաջնորդական եւ Հովուական Թեմերու կողմէ ընտրուած Երեսփոխաններէ եւ նոյն շրջանի ընթացքին մէջ պաշտօնավարող եկեղեցականներէ:

Յօդ. 34.— Երեսփոխանական Ժողովոյ աշխարհիկ անդամները կ'ընտրուին երեք տարի ժամանակով, որուն մի երրորդը կը փոխուի ամէն տարի եւ անոնց փոխարէն նորեր կ'ընտրուին:

Ծանօթ.— Երեսփոխանական Մարմնոյ անդամոց առաջին մի երրորդականի փոփոխութիւնը կը կատարուի վիճակով, առաջին Երեսփոխանական Ժողովին, ինչպէս եւ հերթական երկու եւ երեք տարի մնացողները:

Ծանօթ. Բ.— Պաշտօնի շրջանն աւարտող երեսփոխանք վերընտրելի են:

Յօդ. 35.— Երեսփոխան կրնան ընտրուիլ 25 տարին լրացած եւ իրենց բնական վայրին, կամ այլ տեղ, իբր Հայ Եկեղեցու տրատու անդամ արձանագրուած անձեր:

Յօդ. 36.— Ընտրութեան իրաւունք ունին 25 տարին լրացած, իրենց բնակավայրի եւ կամ նոյն Հովուութեան պատկանող մօտաւոր տեղոյն Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ արձանագրեալ անդամները, առանց սեռի խտրութեան:

Յօդ. 37.— Չեն կրնար ընտրուիլ կամ ընտրութեան մասնակցիլ անոնք որ ա) Միացեալ Նահանգաց դատարաններուն կողմէ դատապարտութիւն կրած են, իրենց պատժոյ շրջանը չեն աւարտած եւ իրենց վարկը վերահաստատուած չէ, բ) Անոնք որ

Վարչութեան կողմէ դատապարտութիւն կրած եւ իրենց պատժոյ շրջանը չեն աւարտած և իրենց վարկը վերահաստատուած չէ :

Յօդ. 38.— Երեսփոխանական ընտրութիւնները կկատարուին համաձայն այն ընդհանուր հրահանգներու, որ կցուած է Սահմանադրութեան :

Յօդ. 39.— Երեսփոխանները կ'ընտրուին ա) Հովուական Թեմերու մէջ իրենց Թեմական Ժողովէն, բ) Առանձին եկեղեցիներու Երեսփոխաններն նոյն եկեղեցու Հոգաբարձութեան կողմէ, գ) Առաջնորդական Թեմերու մէջ, Հոգաբարձութեանց եւ Գործակալներու Խառն Ժողովով :

Յօդ. 40.— Առաջնորդական Թեմերու Երեսփոխաններն ընտրելու համար Առաջնորդը եւ կամ իւր ներկայացուցիչը (եկեղեցական կամ աշխարհական) մօտակայ տեղերու Հոգաբարձութեանց Դիւանները եւ Գործակալները կ'ընտրեն Կեդրոնի հայաշատ քաղաքը (կամ յարմարագոյն վայրը) եւ խառն ժողով կազմելով ընտրել կուտայ Երեսփոխան շրջանակի Թւոյն համեմատականով :

Յօդ. 41.— Երեսփոխաններ կրնան ընտրուիլ կամ ընտրող ժողովի ներկայ անդամներէն, կամ նոյն շրջանի մէջ բացակայ անձերէն եւ կամ ոչ նոյն շրջանի պատկանող անձերէ, միայն ընտրուողները պիտի արձանագրուած ըլլան Եկեղեցու անձնահամարի Տոմարին մէջ :

Ծանօթ.— Հեռաւոր վայրերը կրնան Երեսփոխան ընտրել Երեսփոխանական Ժողովոյ վայրի քաղաքէն եւ կամ մօտաւոր տեղերէ, ժողովներուն ներկայ գտնուելու դիւրութեան համար :

Յօդ. 42.— Երեսփոխաններ կ'ընտրուին իրենց ընտրողներու հովուական շրջանի քուէատուութեան իրաւունք վայելող անդամներու հարիւրին մէկ համեմատութեամբ :

Յօդ. 43.— Ընտրուած Երեսփոխանի ընտրութեան արձանագրութիւնը, ժողովին մասնակցող անդամներու եւ Նախագահի ստորագրութեամբ պիտի անմիջապէս ներկայացուի Առաջնորդին, ստուգելու ժողովի ընտրութեան վաւերականութիւնը :

Յօդ. 44.— Ընտրութեան էութեան, ձեւի անկանոնութեան դէմ բողոքողները պէտք է նոյն ժողովի մէջ յայտնեն իրենց բողոքը : (Տես Յօդուած 260) :

Յօդ. 45.— Առաջնորդն նկատի առնելով Ընտրութեան արձանագրութիւնը և բողոքը, եթէ օրինական կը համարէ ընտրութիւնը կը պահէ այն ներկայացնելու Երեսփոխանական Ժողովին. իսկ եթէ այսօրինի կը գտնէ, նոր ընտրութիւն կը նշանակէ :

Յօդ. 46.— Երեսփոխանական Ժողով կը գումարուի ա) Հրաւիրմամբ Առաջնորդի, իբրեւ Նախագահ Կեդրոնական Վարչութեան. բ) Առաջնորդի կողմէն յատկապէս, անկախ Կեդրոնական Վարչութեան Ժողովէն, իւր հարկեցուցիչ պատճառները ժողովին բերելու պայմանով. գ) Երեսփոխաններու կէսէն առաւել գրաւոր ցանկութիւն յայտնած պարագային, Առաջնորդի հրաւիրմամբ. դ) Հովուական Թեմերու գրաւոր ցանկութեամբ, մեծամասնութիւն ունենալու պայմանաւ. ե) Արտակարգ Երեսփոխանական Ժողով, երբ Հայոց Ընդհանուր Հայրապետը ցանկայ եւ պատուիրէ ունէ խնդրի նրկատմամբ, միշտ Առաջնորդի միջոցով :

Յօդ. 47.— Երեսփոխանական Ժողովոյ անդամներն, իբրեւ լիազօր ներկայացուցիչներ, իրենք են ստուգողը ա) Ներկաներու լիազօրութեան, իրաւունքի, ընտրական օրինականութեան եւ վաւերականութեան. բ) Իրաւունք ունին Ժողովոյ անդամներէն այս կամ այն անդամը հեռացնել ժողովէն, ժամանակաւորապէս նոյն նիստէն կամ նոյն տարեշրջանի նիստէն, հիմնական եւ օրինական պատճառներով :

Յօդ. 48.— Երեսփոխանական Ժողովոյ Նախագահն է Ամերիկայի Հայոց Առաջնորդը, որու միջոցով եւ կհրաւիրուի ժողովը :

Յօդ. 49.— Աթոռը Թափուր եղած պահուն, Առաջնորդի հիւանդութեան, երկար Աթոռէն բացակայութեան շրջանին Երեսփոխանական Ժողովը կը հրաւիրուի Տեղապահի կողմէ, որը եւ Նախագահն է Երեսփոխանական Ժողովոյ :

Ծանօթ.— Առաջնորդի բացակայութեան պարագային հրահիրութիք ժողովը պիտի կատարուի գիտութեամբ Առաջնորդի եւ անոր հրահանգով:

Յօդ. 50.— Առաջնորդի եւ Տեղապահի չեղած պահուն, երբ անհրաժեշտ է Երեսփոխանական Ժողով գումարել, ժողովը կը հրահիրուի Կեդրոնական Վարչութեան կողմէ: Ժողովը գումարուելէ յետոյ նոյն ժողովը կ'ընտրէ իւր Նախագահը եղած եկեղեցականներէն, իբր առժամանակեայ նախագահող:

Յօդ. 51.— Երեսփոխանական Ժողովոյ նիստը կամ նիստերը կը գումարուին յարմար դատած օրը կամ օրերը, զոր կորոչէ ա) Երեսփոխանական Ժողովը իւր նիստը գումարելէն յետոյ. բ) Առաջնորդը եւ Կեդրոնական Վարչութիւնը:

Յօդ. 51.— Երեսփոխանական Ժողովը կը գումարուի առ նուազն տարին մի անգամ:

Յօդ. 52.— Երեսփոխանական Ժողովոյ օրակարգը կը պատրաստուի Կեդրոնական Վարչութեան կողմէ բայց Երեսփոխանական Ժողովը կրնայ անոր վրայ նոր խնդիրներ աւելցնել ներկայ անդամոց մեծամասնութեան քուէով:

Յօդ. 53.— Երեսփոխանական Ժողովոյ իրաւունքներն են.

- Ա.— Կատարել Առաջնորդի ընտրութիւն.
- Բ.— Կատարել Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն.
- Գ.— Լսել Առաջնորդի եւ Կեդրոնական Վարչութեան կրկին ժողովներու տարեկան գործունէութեան Տեղեկագիրները.
- Դ.— Ստանալ անոնց նիւթական եւ բարոյական համարատուութիւնը.
- Ե.— Որոշել Առաջնորդի տարեկան բոճկի քանակը, ինչպէս եւ անոր տան եւ դիւանի ծախքերու չափը.
- Զ.— Լսել ի հարկին Առաջնորդի դէմ եղած դանդատները.
- Է.— Որոշել անոր առժամեայ կամ ընդմիջող

պաշտօնէ հեռացումը, զեկուցանելով այս մասին Ն. Սրբութեան եւ սպասելով Անոր վերջնական կարգադրութեան.

- Ը.— Վերաքննել սոյն Սահմանադրութիւնը.
- Թ.— Քննել, վերաքննել, տնօրինել այն խընդիրները, որ
  - ա) Կը վերաբերին Առաջնորդական ընդհանուր վիճակին.
  - բ) Որոնց կարգադրութիւնը կառավարկուի կամ Առաջնորդէն, կամ Կեդրոնական Վարչութեանէն, կամ Թեմական Ժողովներէն, եւ կամ Հոգաբարձութիւններէն:

Ծանօթ.— Այս կարգի բոլոր խնդիրները նախ պիտի անցնին Առաջնորդին եւ անոր բացատրութեամբ եւ գիտութեամբ ներկայացուին ժողովին:

զ) Իւր որոշումը արձակել առարկելի եւ կամ տնօրինելի խնդրոց մասին, որ կը վերաբերին միայն տնտեսական եւ վարչական հարցերուն, հոգեւոր եւ եկեղեցական խնդիրները վերապահելով Առաջնորդին:

դ) Քննել Երեսփոխաններու ընտրութեան վերաբերեալ բողոքները, ընտրութիւնները:

ե) Լսել Երեսփոխաններու անհատական կամ խմբակցական, դրաւոր կամ բերանացի խընդիրները, առաջարկները, ծրագիրները:


Ժ.— Միջնորդութիւն յարուցանել Ն. Սրբութեան վեհ. Հայրապետի առաջ Առաջնորդին, եթէ Եպիսկոպոս է, շնորհել Արքեպիսկոպոսութեան տիտղոս առաջին տարեշրջանին վերջը, եթէ ցայն Ընդհ. Հայրապետը ինքնաբերաբար կատարած չէ:

Յօդ. 53.— Երեսփոխանական Ժողովի պարտաւորութիւններն են.

- Ա.— Օգնել Առաջնորդին անոր բոլոր բարենպատակ եկեղեցական եւ ազգային խնդիրներու մէջ:
- Բ.— Լսելով Առաջնորդի եւ Կեդրոնական Վարչութեան կրկին ժողովներու տարեկան տեղեկագիրները, միջոցներ հայթայթել առաջարկուած խըն-



13369



դիրները լուծելու, կարգադրելու, հաստատելու, իրականացնելու:

Գ.— Որոշել, գտնել նիւթական այն բոլոր միջոցները որով պիտի պահպանուին Առաջնորդարանը, Առաջնորդը, Դիւանը:

Դ.— Զեռնտու միջոցներ, անձեր գտնել, ա) պատրաստելու կարող հոգեւոր պաշտօնեաներ, բ) Բաղմացնելու հայ լեզուի ուսուցման շրջանները, գ) Կիրակնօրեայ դպրոցներ, դ) Մանկական պարտէզներ Եկեղեցու եւ Առաջնորդարանի հովանաւորութեամբ:

Ե.— Իրենց ընտրական շրջանին մէջ ըլլալ գործոն գործակիցներ Առաջնորդի, Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 55.— Երեսփոխանական Ժողովը կը բացուի Առաջնորդի ներկայութեամբ եւ անմիջապէս կը ձեռնարկէ իւր Դիւանի ընտրութեան:

Յօդ. 56.— Երեսփոխանական Ժողովն իւր Դիւանը կ'ընտրէ ներկայ երեսփոխաններէն իւրաքանչիւր տարեշրջանի համար:

Յօդ. 57.— Դիւանը կկազմուի Ա. եւ Բ. Ատենապետէ, Ա. եւ Բ. Ատենադպրէ, որոնց պաշտօնը կը լրանայ յաջորդ տարեշրջանի Երեսփոխանական նիստի գումարումով:

Ծանօթ.— Դիւանի անդամները վերընտրելի են:

Յօդ. 58.— Երեսփոխանական Ժողովի Դիւանը չի կրնար կազմուիլ Կեդրոնական Վարչութեան անդամներէն:

Յօդ. 59.— Երեսփոխանական Ժողովը վարողն է Ատենապետը, իսկ Ժողովի հսկողն է Նախագահը, որի իրաւունքն է եւ պարտքը Ժողովի նիստերու, որոշումներու, քուէարկութեան եւ այլն օրինականութեան հետեւիլ:

Յօդ. 60.— Եթէ Երեսփոխանական Ժողովը ըզբաղած է Առաջնորդի անձի, գործունէութեան եւ անոր վերաբերող խնդրի քննութեամբ անոր իրաւունքն է խնդրել, որ Առաջնորդը ներկայ չըլլայ:

Ծանօթ.— Առաջնորդի, իբրեւ Նախագահի, Ժողովէն հեռանալէն վերջ, գործի չձեռնարկած,

Ժողովը պէտք է ընտրէ իւր առժամեայ Նախագահը, մինչեւ Առաջնորդի կրկին Ժողովի հրաւիրուիլը:

Յօդ. 61.— Նախագահի իրաւունքն է Ժողովը փակել, եթէ ակնյայտնի է, որ ա) Ժողովը հակասահմանադրական ընթացք ունի, բ) Սոսկութիւններու տեղի տրուի:

Ծանօթ.— Նախագահի կողմէ Ժողովը փակելէն յետոյ նոյն Ժողովը շարունակելը ասօրինի պիտի համարուի եւ այնուհետեւ անցած ոեւէ որոշում հասահմանադրական:

Յօդ. 62.— Նախագահի պարտքն է Ժողովականներու մտքերը խաղաղել, եւ աշխատիլ նոր Ժողով եւ նիստ ունենալ առկախ խնդիրները լուծելու, Ժողովի գործառնութիւնը արդիւնաւէտ դարձնելու:

Յօդ. 63.— Ժողովի բոլոր խնդիրները կորոշուին Ժողովականներու քուէից առաւելութեամբ, ի նկատի առնելով Ժողովի բացման բոլորէն եղած անդամներու քուէներու քանակը եւ Ժողովին հետըզհետէ աւելցող յապաղած աւգամներու թիւը եւ քուէից իրաւունքը:

Յօդ. 64.— Երեսփոխանական Ժողովոյ նիստն ըստ ինքեան փակուած է, երբ Ժողովականներն մեծամասնութիւն չեն կազմեր:

Յօդ. 65.— Իւրաքանչիւր Երեսփոխան կարող է ունենալ առ առաւելն երկու քուէի իրաւունք, այդ իրաւունքը հաստատող գրաւոր թուղթերը Ժողովի Նախագահին կանխօրէն մատուցած ըլլալու պայմանաւ:

Յօդ. 66.— Աշխարհիկ անդամներն չեն կրնար ունենալ հոգեւոր անդամներու իրաւասութիւնն ու քուէն, իբրեւ անոնց ներկայացուցիչ:

Յօդ. 67.— Երեսփոխանական Ժողովոյ Դիւանը գործերը թղթերը կը պահուին Առաջնորդարանի Դիւանի մէջ, իբրեւ մաս մը նոյն Դիւանին:

Յօդ. 68.— Երեսփոխանական Ժողովներու նիստերու Տեղեկագիրները կը յղուին Ընդհանուր Հայոց Հայրապետին, իւրաքանչիւր գումարումէ անմիջապէս յետոյ կամ ամէնքի ստորագրութեամբ եւ կամ Ժողովոյ լիազօրութեամբ Նախագահի եւ Դի-

լանի կազմի ստորագրութեամբ:

Նոր խնդիրներու, միջնորդութեանց, Սահմանադրութեան մէջ կատարուելիք ունի փոփոխութեան համար Ընդհանուր Հայրապետին յղուելիք գրութիւնները կատարադրուին ամբողջ ժողովականներու կողմանէ:

Յօդ. 69.— Երեսփոխանական Ժողովոյ Դիւանը ժողովը աւարտելէ յետոյ պարտաւորութիւն ունի ժողովոյ ստորագրուած բոլոր արձանագրութիւնները, գործերը, ստացուած բոլոր գրութիւնները պատշաճ եղանակով յանձնել Առաջնորդական Դիւանի Քարտուղարին իւր ցրուելէն առաջ:

ԳԼՈՒԽ Դ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 70.— Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը ունի Կեդրոնական Վարչութիւն, որու անդամոց պաշտօնը կը տեւէ երեք տարի:

Յօդ. 71.— ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ կկոչուի այն խառն ժողովը, որ կբաղկանայ Առաջնորդէն, բ) Կրօնական Ժողովէն, գ) Տնտեսական Խորհուրդէն, դ) Ուսումնական Խորհրդի երկու անդամներէն:

Յօդ. 72.— Կեդր. Վարչութեան ԿՐՕՆԱԿԱՆ Ժողովը կը բաղկանայ երեքէն հինգ անդամներէ, ըստ թուոյն Տնտեսական Խորհրդի անդամներուն, Ամերիկայի մէջ պաշտօնավարող եկեղեցականներէ:

Յօդ. 73.— Կրօնական Ժողովոյ անդամները կը ընտրուին Երեսփոխանական Ժողովի կողմէն ա) Պաշտօնավարող Եկեղեցականներու ներկայացուցած ընտրելիներէն, բ) Եթէ այդպիսի ցանկ չկայ՝ Առաջնորդի ներկայացուցած ընտրելեաց ցանկէն, գ) Եթէ այդպիսի ցանկ չկայ՝ իւր անմիջական ընտրութեամբ:

Յօդ. 74.— Կրօնական Ժողովոյ անդամները ի պաշտօն կը հրաւիրուին Առաջնորդի կողմէն Երեսփոխանական Ժողովոյ ցրուելէն անմիջապէս յետոյ:

Յօդ. 75.— Կրօնական Ժողովն իւր առաջին նիստին մէջ կընտրէ իւր Դիւանը, Ատենապետ եւ Ատենադպիր, իւր մէջէն:

Յօդ. 76.— Կրօնական Ժողովոյ Նախագահն է Առաջնորդը, անոր բացակայութեան ատեն Ժողովոյ անդամներէն մէկը, յանձնարարութեամբ Առաջնորդին:

Յօդ. 77.— Կրօնական Ժողովոյ պաշտօնն է Ա.— Աջակցիլ Առաջնորդին ըստ ամենայնի իւր գործառնութեան մէջ:

Բ.— Կարգադրել Կրօնական առկախ խնդիրները, եկեղեցու կանոնական եւ Սահմանադրական շրջանակէն չելլելով:

Գ.— Լսել ամուսնական, ամուսանլուծական խնդիրներ, տալ իրենց կարծիքները, լուծել խնդիրները:

Դ.— Միջոցներ ստեղծել Ամերիկայի Գաղութի անդամներու մէջ վառ պահել Ազգ. Եկեղեցւոյ սէրը, արծարծել կրօնական բարոյական զգացումներ, հսկել ազգային աւանդութեանց, ընտանեկան բարոյական կեանքի վերաբերեալ խղիւղներուն, մատաղ սերունդը Եկեղեցու հետ կապելու նորանոր միջոցներ խորհիլ եւ ստեղծել:

Ե.— Միրալիր յարաբերութիւն մշակել Ամերիկայի մէջ գտնուող քոյր եկեղեցիներուն եւ անոնց պաշտօնէութեան հետ:

Զ.— Ծանօթացնել Հայ Եկեղեցին օտարներուն խօսքով, գրչով, հրատարակութիւններով:

Է.— Հոգալ, քննել եւ ի հարկին Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին ուշադրութեան յանձնել ա) Արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու, ընծայացուներ տալու ըստ տեղական պահանջից, հարցերը. բ) Անհրաժեշտ բարեփոխումներ ունենալու հարցեր առաջի առնել Ն. Սրբութեան, անոր վերջնական լուծման եւ հրամանին սպասելով:

Յօդ. 78.— Կրօնական ժողովն իրաւունք չունի ունէ մեծ կամ փոքր փոփոխութիւն, շեղում մըտցընելու Հայ Եկեղեցու Վարչական, Միսական, Վարդապետական եւ Դաւանական խնդիրներու նկատմամբ առանց Ընդհանուր Հայրապետի գիտութեան, հաճութեան ու արտօնութեան, — իրաւունք ունենալով այդ ամենի մասին իւր գեկուցադրերը միայն յղել Ընդհանուր Հայրապետին:

Յօդ. 79.— Կրօնական ժողովոյ անդամներն պարտաւորութիւն ունին ա) Միշտ ներկայ գտնուիլ ժողովներու նիստերուն, բ) Եթէ կարեւոր պատճառներով պիտի անկարող ըլլան մասնակցելու, նախապէս գրաւոր յայտնել պատճառներն եւս. դ) Չորս նիստէ շարունակաբար բացակայող անդամը կը համարուի ըստ ինքեան հրաժարուած իւր պաշտօնէն, որ կնշանակէ իւր անձը, կարողութիւնը եկեղեցու ի սպաս դնելէ խուսափիլ:

Յօդ. 80.— Կրօնական ժողովոյ վճիռներն վաւերական կը համարուին եւ գործադրութեան կը դրուին, Նախագահի կողմէն ստորագրուելէն յետոյ միայն, առանց այդ ոչ մի որոշում օրինական է եւ ոչ ալ իրաւական ու գործադրելի:

Ծանօթ.— Կարծիքներու տարբերութեան պահուն իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի իւր գրաւոր կարծիքը առանձին ներկայացնելու Նախագահին, խնդրելով կրկին քննել խղիւրը: Նախագահին իրաւունք է յարդել կամ անհետեւանք թողուլ այդ կարծիքը:

Յօդ. 81.— Կրօնական ժողովոյ հրաժարեալ անդամին տեղ նոր անդամ կընտրուի ա) Առաջնորդի կողմէն, բ) Առաջնորդի եւ Կեդրոնական Վարչութեան համաձայնութեամբ:

Յօդ. 82.— Կրօնական ժողովոյ անդամութենէ հրաժարուող եկեղեցականները պարտաւոր են հրաժարական ներկայացնել Առաջնորդին, բացատրելով հրաժարման պատճառները, որը ըստ էութեան կամ կընդունուի եւ նոր անդամ կը հրաւիր-

ուի կամ չընդունուելու դէպքին, հրաժարող անդամը պարտաւորութիւն կունենայ շարունակել մինչեւ նոր Երեսփոխանական ժողովոյ գումարումն:

Յօդ. 83.— Կրօնական ժողովոյ գործերը կմընան Առաջնորդական Դիւանին մէջ իբրեւ անոր մի մասը:

Յօդ. 84.— Առաջնորդն իրաւունք ունի անկախ Կրօնական ժողովէն, անմիջական կարգադրութիւններ ընել վիճակի բոլոր գործերու, Հոգեւոր եւ այլ պաշտօնեաներու նկատմամբ, խնդիրներ կարգադրել, խրատել, սաստել, եկեղեցականները դրամական տուգանքի, եկեղեցական պատժի ենթարկել, դադրեցնել պաշտօնէ, տեղը նորը նշանակել ժամանակաւորապէս եւ այլն, եւ այդ մասին յայտնել Կրօնական ժողովին:

Յօդ. 85.— Կեդրոնական Վարչութեան ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ կընտրուի Երեսփոխանական ժողովէն աշխարհականներէ (ըստ թւոյն Կրօնական ժողովոյ անդամներուն) եւ պաշտօնը կը շարունակուի երեք տարի, վերընտրուելու իրաւունքով:

Յօդ. 86.— Տնտեսական Խորհրդոյ անդամները ի պաշտօն կը հրաւիրուին Առաջնորդի կողմէ Երեսփոխանական ժողովի ցրուելէն անմիջապէս յետոյ:

Յօդ. 87.— Տնտեսական Խորհուրդն իւր առաջին նիստին մէջ իսկ կընտրէ իւր մնայուն Դիւանը, այն է Ատենապետ, Ատենադպիր եւ Դանձապահ, իր մէջէն:

Յօդ. 88.— Տնտեսական Խորհրդոյ Նախագահն է Առաջնորդը:

Յօդ. 89.— Առաջնորդի բացակայութեան եւ անոր յանձնարարութեամբ կատարուած ժողովները, ժողովի որոշումները, վճիռները վաւերական են այն ատեն միայն, երբ Ատենապետը ժողովի արձանագրութիւնը յղէ Առաջնորդին եւ անոր հաւանութիւնն և ստորագրութեամբ վաւերացումն ստանայ:

Յօդ. 90.— Տնտեսական ժողովոյ պատշօնն է.

Ա.— Տնօրինել Առաջնորդական վիճակի բոլոր տնտեսական մատակարարութեան խնդիրները:

Բ.— Երեսփոխանական Ժողովոյ որոշումներուն համաձայն հաղորդակցել Հովուական ու Առաջնորդական Թեմերու, եկեղեցիներու Հոգաբարձութեանց, Գործակալութեանց հետ եւ Առաջնորդական, վիճակային, Դպրոցական եւ այլ ամէն տեսակի եկամուտները գանձել:

Գ.— Հսկողութիւն ունենալ ըստ առաջադրութեան Առաջնորդի եկեղեցիներու, անոնց կալուածներու, տնտեսական ելեմտից հաշիւներու ճշտութեան, օրինաւորութեան, նպատակի ծառայելու խնդիրներուն:

Դ.— Թոյլ չտալ աւելորդ վատնումներ ոչ Առաջնորդական, ոչ Հովուական Թեմերու մէջ:

Ե.— Հոգալ Առաջնորդի, Առաջնորդարանի եւ անոր Դիւանի ծախքերը կանոնաւորապէս:

Զ.— Գանձել Առաջնորդարանի եկամուտները ամսէ ամիս:

Է.— Որոնել նոր միջոցներ Առաջնորդութիւնը եւ Առաջնորդարանը բարձրացնելու յաջս Հայ Ժողովրդեան եւ օտարներու:

Ը.— Աշխատել գտնել այն միջոցները, որով ապագայ կրօնական, կրթական մշակոյթի խնդիրները պիտի կանոնաւորուին եւ յառաջադիմեն:

Թ.— Նոր առաջարկներ բերել Առաջնորդին, Կեդրոնական Վարչութեան, Երեսփոխանական Ժողովին մատակարարութեան խնդիրները բարուղելու կատամբ:

Յօդ. 91.— Տնտեսական Խորհուրդն իւր բոլոր հաշիւներու, ստացած գումարներու, գործադրութեան եղանակի, վատնումներու անմիջական պատասխանատուն է Օրէնքի առաջ:

Յօդ. 92.— Տնտեսական Խորհուրդի որոշումները կը կատարուին Առաջնորդարանի միջոցաւ եւ Առաջնորդի գիտութեամբ:

Յօդ. 93.— Տնտեսական Խորհուրդի ընտրած Գանձապահը իւր կողմէն պատասխանատու է Տնտեսական Խորհուրդին տեղի ունեցած անճշտութեանց, սըխալներու, վատնումներու եւ այլ զեղծումներու համար:

Յօդ. 94.— Գանձապահն իւր բոլոր ստացած գումարները պարտաւոր է ա) Մուծել անմիջապէս Առաջնորդարանին Ընդհ. Հաշուեմատեանը, բ) Ուղարկել ընկալազիր ստացած գումարներու մասին դրամն ուղարկողին, գ) Ելք գրել մանրամասնաբար տրուած գումարները եւ ստանալ ստացազիր, դ) Բոլոր ելքերուն համար ներկայացնել Խորհուրդին փաստաթղթեր:

Յօդ. 95.— Գանձապահն կ'ընտրուի անձնական երաշխիք, կալուած, գոյք եւ այլն ունեցող պատուոյ անձնաւորութիւններէ, որը պատասխանատու է կորստին համար իւր ունեցածով կամ երաշխիքով:

Յօդ. 96.— Գանձապահին, իբրև օգնական, Առաջնորդարանի քարտուղարը, պարտաւոր է ա) Ըստ ստացած բոլոր գումարները (դրամ, չէք եւ այլն) անմիջապէս մուծել Սեղանական Մատեան, բ) Ըստ ստացած գումարներն իսկոյն յանձնել Գանձապահին, անոր ստորագրութիւնը պահանջելով Սեղանական Մատեանի մէջ, գ) Նշանակել ստացուած գրութեան վրայ Սեղանական Մատեանի Յօդուածը եւ նոյնը Սեղանական Մատեանի այլ սիւնակի մէջ Մայր Մատեանի Յօդուածը:

Յօդ. 97.— Տնտեսական Խորհուրդը պարտաւոր է իւրաքանչիւր ամսու վերջը ստուգութեան ենթարկել ա) Սեղանական Մատեանը եկած դրամական գրութեանց հետ, բ) Ստուգել նոյն ամսու մէջ եղած Հաշուեմատեանի ելք ու մուտքը, իրենց փաստաթղթերուն հետ, գ) Ստուգել եղած գանձին քանակը, ո՞ւր, որո՞ւ քով գտնուիլը, դ) Ստուգութենէն ետք արձանագրութիւն կազմել այդ մասին, իւր Դիւանի ստորագրութեամբ:

Յօդ. 98.— Տնտեսական Խորհուրդն ստացած դրամները պարտաւոր է պահպանել ապահով դրամատան մէջ ամբողջապէս, Առաջնորդարանի անունով, եւ հատուցումները կատարել դրամական պիտակներով (չէք):

Յօդ. 99.— Դրամատանից դրամ ստանալու եղանակը կորոչէ Կեդրոնական Վարչութիւնը:

Յօդ. 100.— Տնտեսական Խորհուրդն իրաւունք

ունի Առաջնորդի եւ Կեդրոնական Վարչութեան գիտութեամբ ունենալ տնտեսական խնդիրներու խորհրդատու անդամներ, թուով 3-5, հրաւիրելով դաննք իւր նիստերուն իբրեւ խորհրդատուներ:

Յօդ. 101.— Տնտեսական Խորհրդի այս օժանդակ մարմինը կը ընտրուի Խորհրդի նիստերը տեղի ունեցող քաղաքէն կամ արուարձաններէն զիրքով եւ համայնքի պատուոյ եւ կարող անձերէ, օգնելու ըստ ամենայնի Տնտեսական Խորհրդին անոնց գործերու մէջ:

Յօդ. 102.— Տնտեսական Խորհրդի այս օժանդակ մարմինը յարատեւ չէ, այլ երբ կարելոր կը նկատուի այն ատեն կը ընտրուի եւ գործակցութեան կը հրաւիրուի:

Յօդ. 103.— Տնտեսական Խորհրդի անդամները պարտաւորութիւն ունին ա) Միշտ ներկայ գտնուիլ ժողովներու նիստերուն, բ) եթէ կարելոր եւ անհրաժեշտ պատճառներով չպիտի կրնան ներկայ ըլլալ նիստին, պէտք է նախապէս նախագահին յայտնեն այդ մասին գրաւոր, յայտնելով պատճառները, գ) Շարունակաբար 4 նիստէ բացակայող անդամը կը համարուի, ըստ ինքեան, հրաժարուած իւր պաշտօնէն:

Յօդ. 104.— Պաշտօնէ հրաժարուած եւ կամ նիստերուն չյաճախող անդամներու փոխարէն կը հրաւիրուին ընտրելեաց ցանկին մէջ առաւելագոյն քուէ չահած անձինք:

Յօդ. 105.— Պաշտօնէ հրաժարելու դէպքին հրաժարողը պարտաւոր է գրաւոր պատճառաբանեալ հրաժարական ներկայացնել նախագահին, որ խնդիրը ներկայացնէ Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 106.— Երբ Տնտեսական Խորհուրդը իւր մեծամասնութիւնը կորսնցնէ եւ ընտրելեաց ցանկէն այլեւս հրաւիրելու հնարաւորութիւն չըլլայ՝ Կեդր. Վարչութիւնը նոյն տարեշրջանը լրացնելու համար, անդամակցութեան իրաւունքով կը հրաւիրէ Տնտեսական Խորհրդի խորհրդատուներէն: Իսկ եթէ Տնտեսական Խորհուրդը խմբովին հրաժարուի, Ե-

րեսփոխանական ժողով գումարուելով նոր ընտրութիւն կը կատարուի:

Յօդ. 107.— ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ նիստերը կը գումարուին երկու ժողովներու անդամոց ներկայութեամբ:

Յօդ. 108.— Վարչութեան ժողովներու նիստը օրինական է երբ անդամոց թուին կէսէն աւելին ներկայ է:

Յօդ. 109.— Կեդրոնական Վարչութեան Դիւանը կը կազմուի Կրօնական ժողովոյ Ատենապետէն, Փոխ-Ատենապետ ունենալով Տնտեսական ժողովոյ Ատենապետը, Տնտեսական Խորհրդոյ Ատենադըպրէն եւ նոյն խորհրդի Գանձապահէն, որ եւ Կեդրոնական Վարչութեան Գանձապահն է:

Յօդ. 110.— Կեդրոնական Վարչութեան ժողովներուն նախագահն է Առաջնորդը, անոր բացակայութեան՝ իւր կողմէ կարգուած անձը, ժողովականներէն:

Յօդ. 111.— Կեդրոնական Վարչութեան պաշտօնն է.

Ա.— Տնօրինել այն ամէն խնդիրները, զորս Տնտեսակ. եւ Կրօնական ժողովներու կողմէ կարելի չէ եղած կարգադրել եւ կամ կրօնական եւ տնտեսական հանգամանք ունին.

Բ.— Սատարել Առաջնորդին անոր շինարար գործերուն մէջ.

Գ.— Կազմել Երես. ժողովներու Օրակարգը.

Դ.— Ընդունել Թեմական Հովիւներու, ժողովներու առանձին եկեղեցիներու Հոգաբարձութեանց տարեկան տեղեկագիրները, զոր յղած են Առաջնորդին, քննել եւ վաւերացնել կամ հարկ եղածը տնօրինել, եթէ գոհացուցիչ չեն.

Ե.— Բանակցիլ Թեմական ժողովներու, Հոգաբարձութեանց հետ Տնտեսական խնդիրներու, իրաւական հարցերու նկատմամբ.

Զ.— Քննել, հաստատել Տնտեսական Խորհրդի որոշումները Երեսփոխանական ժողովոյ կողմէ վճռուածները Առաջնորդարանի տարելճարի

բաշխումները Հովուական եւ Առաջնորդական Թեմերու նկատմամբ .

Է .— Առատացնել Առաջնորդարանի Կեդրոնական Մնտուկի հասոյթից աղբիւրները .

Ը .— Կարգել յատուկ քարտուղար Առաջնորդարանի Դիւանատան գործերու համար, Առաջնորդի հաճութեամբ .

Թ .— Առաջնորդի հրատարման պահուն կամ Աթոռը թափուր մնացած միջոցին, ընտրել նախագահութեամբ երիցագոյն Եկեղեցականին, Առաջնորդական Տեղապահ .

Ժ .— Նախնական քննութիւն ունենալ Առաջնորդին դէմ եղած դանդատներու և արդիւնքը ներկայացնել Երեսփոխանական Ժողովին, առանձին տեղեկագրով .

ԺԱ .— Քննել Տնտեսական Խորհրդի դէմ եղած դանդատները, անոր ամսական հաշիւներու ստուգութիւնը, վաւերացնել դայն իր կողմով .

ԺԲ .— Քննել Առաջնորդին հետ Երեսփոխանական ընտրութեանց դէմ եղած դանդատները .

ԺԳ .— Քննել Հոգաբարձական ընտրութեանց դէմ եղած բողոքները, որոշումներ տալ, որ վերջնական են .

ԺԴ .— Հսկել Առաջնորդարանի, Հոգաբարձութեանց, Եկեղեցիներու, Տնտեսական Խորհրդի բոլոր հաշիւներուն եւ ի հարկին հրաւիրել Առաջնորդի ուշադրութիւնը, քննութիւնը նշանակել տալ, հետապնդել գեղծումներ կատարողները եւ դատի տալ Առաջնորդի միջոցաւ .

ԺԵ .— Յանուն Ընդհ. Հայրապետի, Առաջնորդի կողմէն ներկայացուած տարեկան Տեղեկագրին վրայ իւր դիտողութիւններն ընել, եթէ հարկ կը համարէ .

ԺԶ .— Տարեկան Տեղեկագիր ներկայացնել Կրկին Ժողովներու կողմէն Երեսփոխանական Ժողովին, որի պատճէնը առաջի առնել Ընդհանուր Հայրապետին :

Յօդ. 112.— Կեդրոնական Վարչութիւնը ինքն է որոշողը իւր նիստերու օրերը և ժամանակը, որ տե-

ղի պիտի ունենան գոնէ շաբաթը անգամ մը : Արտաքոյ կարգի գումարումներ տեղի կունենան, երբ ստիպողական ըլլայ :

Յօդ. 113.— Կեդրոնական Վարչութեան բոլոր գրութիւնները կը կատարուին Առաջնորդարանի Դիւանին միջոցով եւ Առաջնորդի գիտութեամբ :

Յօդ. 114.— Կեդրոնական Վարչութեան արձանագրութիւնները կատարագրուի Նախագահէն եւ երկու ժողովոց Դիւաններու կողմէն :

Յօդ. 115.— Կեդրոնական Վարչութեան ժողովները կհրաւիրուին Առաջնորդի կողմէն կամ երկու ժողովներու Դիւաններէն, Առաջնորդի բացակայութեան պահուն :

Յօդ. 116.— Կեդրոնական Վարչութեան ունէ անդամ, եթէ բանաւոր պատճառով բացակայէ նիստէն, կամ անակնկալ հեռանալու ստիպուած ըլլայ ժողովէն չլրացած, իրաւունք ունի ժողովոյ Օրակարգի խնդրոց վրայ իւր առանձին կարծիքը յայտնել գրաւոր եւ կամ իւր ձայնն ու քուէն տալ ներկայ եղող անդամներէ մէկուն, եթէ ոչ կորսնցնելով իւր ձայնը մնացած անդամք մեծամասնութիւն կ'նկատուին նոյն ժողովին համար :

Յօդ. 117.— Նախագահի իրաւունքն է ժողովը փակել ա) Եթէ ժողովի կերպարանքը ծանր հետեւանքներու պիտի տանի . բ) Եթէ գումարումները օրինական չեն :

Յօդ. 118.— Կեդրոնական Վարչութեան Ժողովոց մէջ եղած կամ Առաջնորդի հետ եղած անհամաձայնութեան խնդիրները Առաջնորդի եւ կամ Ժողովոյ կողմէն կը ներկայացուին Երեսփոխանական Ժողովին ի տնօրինութիւն :

ԳԼՈՒԽ Ե .

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 119.— Ուսումնական Խորհուրդն Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի իրաւասութեան տակ եղած Եկեղեցիներու եւ համայնքներու բոլոր դըպ-

րոցներու նկատմամբ հսկողութիւն ունեցող Մարմինն է :

Յօդ. 120. — Ուսումնական Խորհուրդն Առաջնորդի անմիջական հսկողութեան տակ եւ անոր ղեկավարութեամբ պէտք է տեսչութիւն ունենայ ա) Կիրակնօրեայ Դպրոցներու, բ) Տարրական դրագիտութիւն տարածող դպրոցներու, գ) Ապագային գոյութիւն ունենալիք միջնակարգ դպրոցներու վրայ :

Յօդ. 121. — Ուսումնական Խորհուրդն կրնարընդհանուր Առաջնորդի կողմէ Կեդրոնական Վարչութեան գիտութեամբ :

Յօդ. 122. — Ուսումնական Խորհուրդի անդամները կհրաւիրուին ա) Ամերիկայի մէջ գտնուած Հայ Եկեղեցւոյ եւ անոր կրթական կեանքով հետաքրքրուող կարող անձերէ, բ) Նոյն Մարմնի մէջ կրնան մասնակցութիւն ունենալ Կեդրոնական Վարչութեան կրկին ժողովներու կարող աղամներէն, գ) Կրնան հրաւիրուիլ Հայ Ժողովուրդի ոչ Հայ Եկեղեցւոյն պատկանող պիտանի եւ գործին նուիրուած անձեր :

Յօդ. 123. — Ուսումնական Խորհուրդի Նախագահն է Առաջնորդն եւ անոր գործադիր իշխանութիւնը :

Յօդ. 124. — Խորհուրդն ունի իւր Դիւանը բաղկացած Ատենապետէ (Ա. եւ Բ.) եւ Քարտուղարէ, իսկ Գանձապահն է Կեդրոնական Վարչութեան Գանձապահը, ընդհանուր հիմունքներով Սահմանադրութեանս :

Յօդ. 125. — Խորհուրդն ունի իւր Դիւանը որ մաս կը կազմէ Առաջնորդական Դիւանին եւ կը պահուի հոն : Պաշտօնական բոլոր գրութիւնները կը կատարուի Առաջնորդարանի Դիւանին միջոցով եւ անոր Քարտուղարին ստորագրութեամբ :

Յօդ. 126. — Ուսումնական Խորհուրդին պաշտօնն է .

Ա. — Տարածել Հայ Դպրութիւնը Հայ Եկեղեցու իրաւասութեան տակ եղած բոլոր համայնքներու մէջ, ուր Հայ մանուկ կայ .

Բ. — Տարածել նոյնը նաեւ միւս բոլոր հա-

յութեան խաւերուն մէջ, ընդհանուր ծրագրով .

Գ. — Կազմել դպրոցական ծրագիր ա) Մանկապարտէզի (5-7 տ.) բ) Սկզբնական շրջանի (7-9 տ.), եւ գ) Միջին շրջանի (9-15 տ.) երկսեռ մանուկներու համար .

Դ. — Կազմել ծրագիր բոլոր Հայ Եկեղեցիներու հովանու տակ եղած փոքրերու եւ մեծերու Կիրակնօրեայ դպրոցներու ա) Մանկահասակներու (7-9 տ.), Միջին հասակի (10-15 տ.) եւ Մեծերու (15-20 տ.) համար .

Ծանօթ. — Հայութեան միւս յարանուանութեանց պատկանող մեծ ու փոքր հաստատութիւններու համար պարտադիր չէ կարող ըլլալ Դ. կէտի Ծրագիրը, եթէ ընդունած են Գ. կէտը :

Ե. — Հսկել Ծրագրի անթերի գործադրութեան .

Զ. — Հսկել Հոգաբարձութեանց, Համայնքներու, անհատական ղեկավարութեամբ առաջնորդուող բոլոր դպրոցներու վրայ .

Է. — Ստանալ անոնց տարեկան տեղեկագրերը, Ծրագրի փոփոխութեան առաջարկները, քննել դայն եւ ներկայացնել Առաջնորդին .

Ը. — Պահել բոլոր դպրոցներուն ա) Ցուցակը, բ) Ուսուցչական կազմի ցանկը, գ) Աշակերտներու թուական, յառաջդիմութեան եւ այլ խնդիրներու վերաբերեալ վիճակագրութիւն .

Թ. — Ընդունել Հոգաբարձութեանց, Համայնքներու առաջարկները տեղական ուսուցչական մարմնի կազմի նկատմամբ, ներկայացնել ի հաստատութիւն Առաջնորդի .

Ճ. — Լուծել Հոգաբարձութեանց, Համայնքներու եւ տեղական դպրոցներու կազմին մէջ եղած ներքին անհամաձայնութիւնները եւ ի կարեւոր դէպքս դիմել Առաջնորդի վերջնական որոշման եւ վրձուին :

Յօդ. 127. — Իւրաքանչիւր Եկեղեցի, Համայնք կրնայ եւ պէտք է ունենայ իւր դպրոցը, որի հոգաձուութիւնը եւ հսկողութիւնը յանձնուած է տեղական

Հոգաբարձութեան եւ տեղական դպրոցական տեսչութեան:

Յօդ. 128.— Տեղական դպրոցական տեսչութիւնը օգնական եւ խորհրդական անդամ է Հոգաբարձութեան եւ իւր գործերը կը վարէ Հոգաբարձութեան գիտութեամբ եւ օժանդակութեամբ եւ Ուսումնական Ոորհրդի վերին հսկողութեամբ:

Յօդ. 129.— Տեղական Դպրոցական Տեսչութիւնը կը կազմուի Հոգաբարձութեան կողմէ հրաւիրուած տեղական կարող անձերէ:

Յօդ. 130.— Տեղական Դպրոցական Մարմնի Նախագահն է Հովիւը, Ատենապետը՝ Հոգաբարձութեան Ատենապետը, անոր բացակայութեան՝ Մարմնի կողմէ ընտրուած Փոխ-Ատենապետը: Մարմինն ունի իւր Գարտուղարը:

Յօդ. 131.— Տեղական Դպրոցական Մարմինը կը բաղկանայ հինգ անդամէ, որուն անդամն է նաեւ Տեղական Դպրոցի Տեսուչը (եթէ չունի Աւագ ուսուցիչը կամ ղեկավարը):

Յօդ. 132.— Տեղական Դպրոցական Մարմինը կրնայ իւր նիստերուն հրաւիրել, խորհրդակցական ձայնով, տեղւոյն եկեղեցասէր Հայուհեաց Վարչութիւնը, կարեւոր խնդիրներու նկատմամբ:

Յօդ. 133.— Տեղական Դպրոցական Մարմինն է որ կը կազմէ ա) Տարեկան Նախահաշիւը Կիրակնօրեայ եւ միւս դպրոցներու, բ) Կը հրաւիրէ ուսուցիչները այդ դպրոցներու, գ) Կառավարիչ նախահաշիւը եւ ուսուցչական կազմը Հոգաբարձութեան խորհրդի հաւանութեան, եւ անոր միջոցով Առաջնորդին ի հաստատութիւն:

Յօդ. 134.— Տեղական Դպրոցական Մարմինը պարտաւորութիւն ունի իւրաքանչիւր տարու վերջ Ուսումնական Ոորհրդին յղել իւր տարեկան Տեղեկագիրը, մանրամասն վիճակագրական տեղեկութեամբ, յայտնելով նաեւ իւր ցանկութիւնները բոլոր խնդիրներու նկատմամբ:

Յօդ. 135.— Ուսուցչական Մարմինը կը կազմուի անձերէ որոնք ա) Աւարտած են գոնէ միջնակարգ դպրոց (High School), բ) Վկայուած են երկար

տարիներու փորձառութեամբ, գ) Մաքուր նկարագրի տէր են:

Յօդ. 136.— Դպրոցներու մէջ ուսուցչութիւն կրնան կատարել միայն Առաջնորդի հաւանութիւն ու հաստատութիւն գտած անձերը առանց սեռի խտրութեան:

Յօդ. 137.— Տեղական Դպրոցական Մարմնի եւ ուսուցչական կազմի մէջ եղած տարաձայնութիւնները կը լուծուին Հոգաբարձական նիստի մէջ, որուն ներկայ կըլլայ եւ Մարմնի Փոխ-Ատենապետը, իսկ եթէ ակարող ըլլայ կը դիմեն Ուսումնական Ոորհրդին:

Յօդ. 138.— Տեղական Դպրոցական Մարմինը իւրաքանչիւր տարի ունի իւր դպրոցական հանդէսը նպատակն ունենալով ա) Յոյց տալ համայնքին դպրոցի յառաջդիմութեան չափը, բ) Արծարծել իւր սանիկներու մէջ աղատ խօսքի, բնական շարժումներու եւ հասարակութեան առաջ ելլելու կարողութիւն փոքր հասակէն սկսած, գ) Հետաքրքրել համայնքը դպրոցական գործով եւ կապել աղջային գիտակցութեան հիմք կազմող հաստատութեան:

Յօդ. 139.— Իւրաքանչիւր Տեղական Դպրոցի էական նպատակն է.

Ա.— Տալ հայ դրագիտութիւն իւր փոքրերուն.

Բ.— Այդ դրագիտութեամբ դնել անոնց մէջ Աղջային գիտակցութեան ոգին.

Գ.— Կապել զայն իւր Մայրենի Եկեղեցու, անոր աղջային զգացումներու եւ մեծ աւանդութեանց.

Դ.— Փոքր հասակէն մշակել մանուկներու սրտին, հոգուն եւ մտքին մէջ մաքուր քաղաքացի ըլլալու հակումը. սիրելու իւր նոր Հայրենիքը, ազատ Ամերիկան, յարգել անոր կառավարութիւնը, հնադանդէլ անոր օրինաց եւ ըլլալ պիտանի անդամ:

Ե.— Յարգելով ու սիրելով Ամերիկան ու անոր հաստատութիւնները, չմոռնալ իւրը, այն է իւր ազգը, եկեղեցին, որ հիմքն է ուրիշինը յարգելու եւ սիրելու բարոյական ու մտաւոր մշակոյթին.

Յօդ. 140.— Ուսումնական Խորհուրդը բացի իւր սովորական նիստերէ ունի եւ խառն ժողովներ կեդրոնական Վարչութեան հետ, ըստ առաջարկի Առաջնորդի, ընդհանուր կազմով եւ կամ Վարչութեան մէկ կամ միւս Խորհրդի հետ:

Յօդ. 141.— Ուսումնական Խորհուրդը կրնարուի երեք տարով եւ կը բաղկանայ 5-7 անդամէ: Հըրաժարող անդամներու փոխարէն կը հրաւիրուին նոր անդամներ:

Յօդ. 142.— Ուսումնական Խորհուրդն իւր տարեկան Տեղեկագիրը կը ներկայացնէ Առաջնորդի միջոցաւ Երեսփոխանական Ժողովին:

Յօդ. 143.— Ուսումնական Խորհրդի գումարման եւ նիստերու մասնակցութեան եղանակը համապատասխան է Սահմանադրութեանս ընդհանուր ոգուն:

ԳԼՈՒԽ Զ.

ՀՈՎԻՒՆԵՐ

Յօդ. 144.— Իւրաքանչիւր համայնք, մեծ կամ փոքր, ունի իւր Հովիւր:

Յօդ. 145.— Փոքր համայնքները իրրեւ առանձին ծուխեր, կրնան միանալ եւ ունենալ մի ընդհանուր Հովիւ:

Յօդ. 146.— Առանձին, ինչպէս եւ միացած համայնքները, իրենք կրնարեն իրենց Հովիւր:

Յօդ. 147.— Ընտրուած եւ հաստատուած Հովիւները իրենց հովուութեանց յանձնուած համայնքի, Թեմի ժողովներու եւ եկեղեցական կազմակերպութեանց նախագահն են, ի պաշտօնէ, եւ անոնց օրինական որոշմանց գործադիր պաշտօնեաները:

Յօդ. 148.— Հովիւներու գիտութեամբ եւ նախաձեռնութեամբ է, որ կրնարուին եկեղեցւոյ, համայնքի եւ համայնք կազմած տարբեր ծուխերու տեղական եւ Թեմական եկեղեցական Վարչական Մարմինները, ըստ տրամադրութեան Սահմանադրութեան եւ ըստ հաստատուած ներքին կանոնադրութեան:

Ծանօթ.— Հովիւները Սահմանադրութեանս օրէնքներու, հրահանգներու բացատրողները չեն, այլ միայն գործադրողները:

Յօդ. 149.— Հովիւները, ըստ կարգաց Հայ Եկեղեցւոյ, կրնարուին Համայնքէն, ընտրական ժողովի կողմէն եւ կը հաստատուին Առաջնորդէն առանձին գրութեամբ:

Առաջնորդին կը վերապահուի ընտրուածի վաւերացում, հաստատութիւնը կամ չհաստատուելը:

Յօդ. 150.— Ոչ մի հոգեւոր պաշտօնեայ, ինչ աստիճանի եւ կարգի ալ ըլլայ, չի կրնար ունէ պաշտօն վարել Ամերիկայի Առաջնորդական Վիճակի ունէ վայրի մէջ, առանց Առաջնորդի կանխագոյն հաճութեան եւ հաւանութեան:

Յօդ. 151.— Այլ համայնքներու, եկեղեցիներու համար ձեռնադրուած եկեղեցական պաշտօնեաներ կրնան ընտրելի ըլլալ Ամերիկայի Առաջնորդական Վիճակի մէջ, եթէ Առաջնորդին

Ա.— Կը ներկայացնեն իրենց ձեռնադրութեան ճշգրիտ վկայականը.

Բ.— Եթէ ունին համապատասխան եկեղեցական կրթութիւն, որի համար պիտի ներկայացնեն պատշաճ վկայականներ:

Գ.— Եթէ կանխապէս ներկայացուած կըլլան Առաջնորդին իրենց նախկին պաշտօնավարութեանց վայրերու պատշաճ եւ օրինական իշխանութեանց «Բարուոք ծառայութեան» վկայականը:

Դ.— Եթէ նախ քան ընտրութիւնը կներկայացնեն գրաւոր խոստմնագիր (տես խոստմնագիր Գ.):

Յօդ. 152.— Ընտրուելիք անձն եւ կամ ընծայացուն պարտաւոր է ներկայացնել Առաջնորդին.

Ա.— Ուսման վկայական, տրուած կամ Մայր Աթոռի Հոգեւոր ձեմարանէն, կամ Արմաշի Դպրեվանքէն, կամ Հայ Հոգեւոր Դպրանոցներէն մէկէն, կամ Կ. Պոլսոյ Կեդրոնականէն, կամ օտար կրօնական հաստատութեանց եւ համալսարանի, Աստուա-

ծարանական ձեմարանի վկայական կամ վկայական Կրօնական ժողովի կողմէն .

Բ. — Վկայական մարմնական առողջութեան , ուեւէ վարակիչ հիւանդութենէ զերծ ըլլալու , մտաւոր եւ մարմնական արատներէ իսպառ ազատ ըլլալէ :

Գ. — Վկայական ծննդեան եւ ամուսնութեան .

Ծանօթ. — Ըստ կարգաց Հայ Եկեղեցւոյ 55 տարեկանէն վեր եղողները չեն կրնար ձեռնադրութեան կոչուիլ :

Յօդ. 153. — Առաջնորդի՝ Ընտրելի եկեղեցակաւնաց նկատմամբ կանխադոյն հաճութիւնն առնելէ յետոյ միայն համայնքը կրնայ ընտրութեան ձեռնարկել եւ ընտրութեան հետեւանքը ներկայացնել ի հաստատութիւն Առաջնորդի :

Յօդ. 154. — Ընտրուած եւ հաստատուած Հովիւը պաշտօնի անցնելով , սրարտաւորութիւն ունի ,

Ա. — Մատակարարել Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները իրեն խնամոց յանձնուած Հօտին .

Բ. — Կատարել եկեղեցական պաշտամունք , ըստ կարգի եւ ծէսի Հայ Առաքել . Ս. Եկեղեցւոյ , առանց ուեւէ շեղումի եւ նորաձեւութեան :

Գ. — Քարոզել , ուսուցանել եկեղեցւոյ վարդապետութիւնը , քրիստոնէական հաւատոյ եւ բարոյականի ուսումը , բանիւ եւ գրով .

Դ. — Հայթայթել միջոցներ , գործակցութեամբ Հոգաբարձութեան , եւ կամ առանձին՝ մայրենի լեզուի , եկեղեցւոյ դաւանանքի եւ վարդապետութեան , եկեղեցական եւ ազգային պատմութեան ուսուցման , մեծերուն եւ փոքրերուն :

Ե. — Հողալ տեղական Կիրակնօրեայ եւ փոքրահասակներու ազգային դպրոցի յառաջդիմութեան .

Զ. — Խրախուսել համայնքի մէջ գտնուած բարենպատակ հաստատութիւնները , ընկերութիւնները , մանաւանդ անոնց , որոնց կանոնադրութիւն հաստատուած է Առաջնորդէն .

Է. — Աշխատիլ նոր ընկերակցութիւններ կազ-

մել գործի մղելով երիտասարդները , օրիորդները կանայք եւ այլ մարդիկ .

Ը. — Ազգել իրենց հողեւոր հովուութեան յանձնուած անձերու մէջ վառ պահելով եկեղեցու եւ ազգի սէրը , կատարել տալ բարենպատակ կտակներ յօգուտ ա) Տեղական Եկեղեցւոյ , բ) Առաջնորդարանի հաստատութեանց , գ) Մայր Աթոռի , դ) Մայր Աթոռի ձեմարանի , ե) Ամերիկայի մէջ Հոպեւոր պաշտօնեաներ սլատրաստելու հիմնադրամի եւ կամ գործի , զ) Բարեգործական ուեւէ նպատակի եւայլն .

Թ. — Պարբերաբար համարատու ըլլալ եղած ընկերութեանց , Միութեանց գործունէութեան եւ նոր կազմուելիքներու մասին :

Ժ. — Պահել իրենց համայնքներու , եկեղեցիներու , միացեալ ծուխերու զաւակաց ամբողջի անձնահամարի արձանագրութիւնը .

ԺԱ. — Ունենալ առանձին մատեան , ուր պիտի օր-օրին արձանագրուին Ծնելոց եւ Մկրտելոց , Պսակելոց եւ Ննջեցեալներու անունները , ըստ ընկալեալ ձեւի , եւ ամէն երեք ամիս ցուցակները յղել Առաջնորդարան :

ԺԲ. — Հսկել ճշգիւ գործադրութեան տեղական համայնքին ներքին կանոնադրութեան ժողովներու որոշմանց կանոնաւոր արձանագրութեան , զորս պարտին վաւերացնել , ի բացառեալ այն պարագայէն , երբ հակօրինական կը նկատեն , որի մասին իսկոյն կը տեղեկագրեն Առաջնորդին , իրենք ձեռնպահ մնալով .

ԺԳ. — Չպահել իրենց քով ուեւէ դրամ , որ կվերաբերի Առաջնորդարանի , Հոգաբարձութեան , եկեղեցուն եւայլն . այլ իւրաքանչիւրն իսկոյն յղել եւ յանձնել ըստ պատկանելաց .

ԺԴ. — Այցելել իւր հովուութեան յանձնուած հօտը , ինչպէս եւ շրջակայ տեղերու ժողովրդեան , եթէ իւր տեսչութեան տակ են , ըստ կանոնադրութեան , եւ չթողուլ զանոնք առանց հոգեւոր մխիթարութեան ու խնամոց .

ԺԵ. — Այցելել հիւանդները , բանտարկեալ-

ները, կարօտեայները մխիթարելով զանոնք եւ աշխատել ընդ առաջ երթալ անոնց կարիքներուն .

ԺԶ. — Զանալ հաշտարար միջնորդ ըլլալ ընտանիքի մէջ ծագած դժգոհութեանց, երկպառակութեան, վէճերու, եթէ հնար չունենայ անձամբ՝ խնդիրը Հոգաբարձութեան Սորհրդին տանելով, իսկ ծանր պարագաներուն Առաջնորդարան դիմելով .

ԺԷ. — Իրենց ձեռնահասութենէ վեր եղած Հոգեւոր խնդիրներու նկատմամբ միշտ դիմել Առաջնորդին, որը ըստ պարագայից կամ ինքը կը լուծէ եւ կամ կղիմէ Ամենայն Հայոց Հայրապետին :

Յօդ. 155. — Ըստ կարգաց Հայ Եկեղեցւոյ Հովիւր կամ ոեւէ Հոգեւոր պաշտօնեայ, առանց պատշաճ արտօնութեան իրաւունք չունի ոեւէ պաշտօն կատարելու իւր Թեմէն դուրս, առանց նոյն Թեմի Հովուի եւ Հոգաբարձութեան գիտութեան եւ հրաւերի եւ առանց Առաջնորդի գիտութեան եւ յատուկ հրամանի :

Յօդ. 156. — Հովիւները ինչպէս եւ ամէն աստիճանի Հոգեւոր պաշտօնեաները իրենց բոլոր Հոգեւոր դործերու, անձնական դատապարտելի ընթացքի համար պատասխանատու են Առաջնորդին, իբրեւ իրենց վերին իշխանաւորի, որ ներկայացուցիչ է Վեհ. Հայրապետի :

Յօդ. 157. — Հովուի անմիջական իրաւասութեանց կ'ենթարկուին եկեղեցու բոլոր ստորին աստիճանի եկեղեցականները, խմբապետը, դպիրները եւ նա է պատասխանատուն եկեղեցու մէջ Աստուածապաշտութեան կանոնաւորութեան, ընդունուած երգեցողութեան պահպանութեան, եկեղեցու ներքին կարգապահութեան եւ պատշաճաւորութեան :

Յօդ. 158. — Ոչ մի եկեղեցական ստորին պաշտօնեայ չի կրնար հրաւիրուիլ, պաշտօն ստանալ, պաշտօն վարել, առանց Հովուի գիտութեան :

Ծանօթ. — Ստորին պաշտօնեայ ըսելով կը հասկըցուին Աւագ-Սարկաւագ, Սարկաւագ, Սմբապետ Լուսարար, Դպրապետ, Դպիր եւայլն :

Յօդ. 159. — Լուսարարները եւ Սմբապետները

ենթակայ են Հովուին անկէ միայն հրահանգներ ըստանալով եկեղեցական պաշտամանց նկատմամբ : Սմբապետներն իրաւունք չունին իրենց հաճոյքին համաձայն նորանոր եղանակներ, դաշնակաւորումներ մտցնել եկեղեցի, առանց իրենց եղանակներն ու դաշնակաւորումները պատշաճ եղանակով Առաջնորդի միջոցով Հոգեւոր իշխանութեան ներկայացընելու եւ հաստատութիւնն ստանալու : Իսկ մինչ այդ պարտաւոր են երգել եւ երգել տալ հաւանութիւն եւ հաստատութիւն գտածները միայն :

Յօդ. 160. — Ստորին պաշտօնեաներու եւ Հովուի մէջ եղած տարաձայնութիւնները կը լուծին Հոգաբարձական Ժողովներու մէջ եւ եթէ չլուծուին կուղարկուին դիտողութիւններով ի վերջնական որոշումն Առաջնորդի :

Ծանօթ. — Հովիւն իրաւունք ունի կարգապահութեան չենթարկուող ստորին պաշտօնեաներն (Լուսարար, Սմբապետ, Երգիչ, Դպիր եւայլն) իսկոյն դադարեցնել պաշտօնէ, մինչեւ անոնց մասին արուելիք վերջնական որոշումը :

Յօդ. 161. — Քարողիչները, Հովիւները պարտաւոր են տարին մի անգամ իրենց գործառնութեանց տեղեկագիրը ներկայացնել Առաջնորդին, մի օրինակ ալ յանձնելով Թեմական կամ Եկեղեցու Հոգաբարձութեան Ժողովին, որը եթէ ունի դիտողութիւններ՝ կ'յղէ Առաջնորդին :

Յօդ. 162. — Հովուի դէմ եղած ոեւէ բողոք ա) կ'յղուի Կեդրոնական Հոգաբարձութեան, ուր եւ խնդիրը կը լուծուի եւ կը տեղեկագրուի Առաջնորդին . բ) Եթէ խնդիրը աւելի ծանր կերպարանք կունենայ եւ Հոգաբարձութիւնը կը դժուարանայ լուծում տալ, դրաւոր կերպով կը յղուի Առաջնորդին խնդրելով անոր տնօրէնութիւնը . գ) Եթէ Առաջնորդը, Կեդր. Հոգաբարձութիւնը կամ Թեմական Ժողով չկրնան խնդիրը կարգադրել, խնդիրը իւր ամբողջութեամբ կերթայ Կեդր. Վարչութեան, հոն քննուելով, կամ վերաքննուելով, վերջնական վճիռ եւ լուծում կստանայ :

Ծանօթ. — Քարողիչներու, Ժամանակաւոր եւ

առժամեայ հոգեւոր պաշտօնեաներու, ինչպէս եւ եկեղեցու միւս բոլոր պաշտօնեաներու, զէմ եղած գանդատները կ'յղուին հոգաբարձութեանց կողմէ Առաջնորդին, անոր վերջնական վճռահատութեան:

Յօդ. 163.— Եթէ համայնքը Հովիւ չունի, Առաջնորդը, Հոգաբարձութեան գիտութեամբ եւ խնդրով, կը յղէ եկեղեցական մը համայնքը հովուելու ժամանակաւորապէս կամ առժամեայ:

Ծանօթ.— Առժամեայ հովիւներ կը կոչուին անոնք, որ յղուած են Առաջնորդին կողմէն կամ Հոգաբարձութեան գիտութեամբ եւ կամ անկախօրէն հովուելու 3-4 ամիս, մինչեւ ժամանակաւոր հովիւ ընտրուի:

Յօդ. 164.— Հովիւները իրենց հրատարականը կը ներկայացնեն Առաջնորդին եւ միւս օրինակը կեդրոնի կամ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան: Կեդրոնը կամ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը՝ Առաջնորդի հետ բանակցելով, անոր գիտութեամբ եւ հաւանութեամբ կ'ընդունէ կամ կը մերժէ հրատարականը:

Յօդ. 165.— Պայմանաժամով հրաւիրուած Հովիւը չի կրնար առանց լուրջ ու բանաւոր պատճառներու թողնել իւր պաշտօնը, հակառակ պարագային չի կրնար սեւէ տեղ պաշտօն վարել:

Յօդ. 166.— Անհովիւ մնացած եւ առժամանակեայ Հովուի ձեռքով կառավարուող համայնքը պէտք է զիմէ Առաջնորդին խնդրելով, ա) Ուղարկել ժամանակաւոր Հովիւ իրենց համար, բ) Կամ խնդրել անոր հաւանութիւնը իրենց ներկայացուցած թեկնածուի նկատմամբ, իբրեւ ժամանակաւոր Հովիւ, որի պաշտօնավարութիւնը կը տեւէ առ առաւելն մի տարի, իբրեւ փորձ:

Յօդ. 167.— Թէ ժամանակաւոր եւ թէ առժամեայ Հովիւներու զէմ եղած գանդատները կը յղուին Հոգաբարձութեանց, որ կը քննէ խնդիրը եւ կը լուծէ, բ) Եթէ Հոգաբարձութեան եւ Հովուի մէջ է խնդիրը, Հոգաբարձութիւնը կը զիմէ Առաջնորդին եւ նա կը կարգադրէ խնդիրը եւ եթէ ժամանակը լրանալուց իսկ առաջ պէտք է ժամանակաւոր Հովի-

ւր (նոյն եւ առժամեան) հեռացուի իւր պաշտօնէն, ան կը հեռանայ առանց սեւէ պահանջի հազանդելով իշխանութեան:

Յօդ. 168.— Առ առաւելն մէկ տարուայ ժամանակամիջոցի մէջ Առաջնորդը, կամ Տեղապահը կամ Առաջնորդարանի ներկայացուցիչը կը հրաւիրէ Թեմական Ժողով, նոյն Թեմի կեդրոնին մէջ: Թեմական Ժողովը կը պատրաստէ տրամադրելի եկեղեցականաց կամ ընծայացուած ցանկ մը, որ կը հաղորդուի համայնքի ծխական Հոգաբարձութեանց, որոնք իրենց ծուխի անդամները ժողովի հրաւիրելով, դադարի քուէարկութիւն կը կատարեն ներկայացուած ցանկին վրայ, եւ արդիւնքը անմիջապէս կը հաղորդեն Կեդրոնի Դիւանին, որը ստացած քուէարկութեան արդիւնքը գումարելով, առաւելագոյն քուէ ստացողը կը համարէ ընտրուած Հովիւ:

Յօդ. 169.— Հովուական պաշտօնի թեկնածուներու կանխագոյն հաճութիւնն առնելէ յետոյ միայն թեկնածուին անունը կը մտնէ ընտրելեաց ցանկին մէջ: Նոյնը եւ Ընծայացուի նկատմամբ:

Յօդ. 170.— Թեմական Ժողովը ինչպէս եւ Հոգաբարձութիւնը չկրնար Հովիւը հրատարեցնել կամ հրատարեցրած համարել իւր պաշտօնէն ժամանակը լրանալէն առաջ, առանց հիմնական ու էական պատճառներու:

Յօդ. 171.— Կուսակիւցն եկեղեցականները չեն կրնար հովուական պաշտօն վարել Ամերիկայի Հայոց Առաջնորդական վիճակին մէջ, ըստ կարգաց Հայ Եկեղեցւոյ:

Յօդ. 172.— Կուսակիւցն Հոգեւոր անձերը (Եպիսկոպոս, Ծայրագոյն Վարդապետ, Վարդապետ, Աբեղայ) կրնան ստանձնել միայն քարոզիչներու պաշտօն, ըստ իրենց ուխտի:

Յօդ. 173.— Քարոզիչները կրնարուին համայնքներու, Եկեղեցիներու Հոգաբարձութեանց կողմէ, նախապէս այդ մասին ստանալով Առաջնորդի հաճութիւնը եւ ընտրութենէն յետոյ ընտրութեան արդիւնքը ներկայացնելով Առաջնորդին ի հաստատութիւն:

Յօդ. 174.— Քարոզիչները կը նշանակուին նաեւ Առաջնորդին կողմէն կամ որոշ վայրերու համար եւ կամ շրջուն, որոնց հոգածութիւնը Առաջնորդարանը իւր վրայ կաննէ:

Յօդ. 175.— Քարոզիչներու պարտաւորութիւնն է.—

Ա.—Քարոզել Աւետարանը, ուսուցանել Հայ Եկեղեցու Դաւանութիւնը, Վարդապետութիւնը, Քրիստոնէական հաւատոյ եւ Բարոյականի ուսուցումը, բանիւ դրով եւ անձնական օրինակով.

Բ.— Գործակցութեամբ Առաջնորդին Հայթայթել միջոցներ զօրացնելու ըստ ամենայնի Հայ Եկեղեցին, գրաւիչ դարձնել զայն եւ անխուսափելի պահանջ.

Գ.— Պատրաստ ըլլալ ամէն ժամ, ըստ կարգադրութեան Առաջնորդի, հասնել այն տեղերը, ուր իւր ներկայութիւնը կարեւոր կը համարուի.

Դ.— Կատարել այն բոլոր եկեղեցական, վարչական յանձնարարութիւնները, որ կը հրահանուուի Առաջնորդի կողմէն.

Ե.— Ենթարկուիլ Հայ Եկեղեցւոյ եւ անոր կանոններուն, յարգել եւ չեւել Սահմանադրութեան գծածներէն.

Զ.— Խրախուսել իրենց շրջանի եկեղեցական Ընկերութիւնները, Միութիւնները, Բարենպատակ հաստատութիւնները, յորդորել նորերն ստեղծելու:

Է.— Ներկայացնել իրենց Տարեկան Տեղեկագիրը իրենց շրջանի եւ իրենց գործառնութեան մասին, ինչպէս եւ իրենց հարկ համարած միջոցներու մասին եկեղեցւոր ներքին եւ արտաքին կեանքի կատմամբ.

Ը.— Հսկել իրեց շրջանի եկեղեցու բոլոր քահանաներու վրայ, ըստ հրահանգի Առաջնորդի:

Յօդ. 176.— Քարոզիչներն ի պաշտօնէ անդամ են Երեսփ. Ժողովոյ, եկեղեցականներու համագումարներու և կրնան անդամ ընտրուիլ Կրօնական Ժողովի:

Յօդ. 177.— Քարոզիչ եկեղեցականներն իրաւունք ունին իրենց պաշտօնէն զատ կարեւոր ժամա-

նակ պատարագ մատուցանելու, եկեղեցական պաշտամաց նախագահելու, եւ մասնակցելու (առանց հովուական անմիջական պաշտօնի ձգտման) պսակներ, մկրտութիւններ կատարելու, յուղարկաւորութեանց մասնակցելու, ըստ յատուկ հրահարանաց եւ կամ յանձնարարութեանց Առաջնորդի:

Ծանօթ.— Ծ. Վարդապետները իրաւունք չունին Ս. Պատարագի միջոցին կամ այլ ժամանակ Եպիսկոպոսական աստիճանի միայն յատուկ զգեստ կրելու ոչ մասնակի եւ ոչ ալ ամբողջական:

Յօդ. 178.— Ամերիկայի Հայ Առաջնորդական Վիճակի մէջ պաշտօնավարող յեւէ կուսակրօն եկեղեցականի, ինչ աստիճանի, դիրքի եւ պաշտօնի ալ ըլլայ, բոլոր ստացուածքը, շարժական, անշարժ, դրամական եւ այլն բոլորը, ըստ կարգաց Հայ Եկեղեցւոյ կալաւանին այն Միաբանութեանց, որոնց անդամ են, իսկ եթէ Միաբանութեանց չեն պատկանիր, բոլորի ժառանգորդը է ըստ ինքեան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ծանօթ.— Անոնց եկեղեցական նշանները (Պանագէ, Խաչ եւ այլն) իրենց մահէն յետոյ Առաջնորդարանի միջոցով կուղարկուին Մայր Աթոռ:

Նոյնը Սրբազան Հայրապետին կողմէ շնորհուած շքանշաններու համար, եկեղեցականաց եւ աշխարհականներու նկատմամբ:

Ծանօթ. Բ.— Անոնց մահուան դէպքին Առաջնորդն է, ըստ իրաւանց, անոց ժառանգութեան անմիջական իրաւատէրը, ստացողը, կարգադրողը եւ ըստ պատկանելոյն յողղը, Կեդրոնական Վարչութեան խորհրդակցութեամբ:

Յօդ. 179.— Ոչ մի կուսակրօն անձ իրաւունք չունի կտակով յեւէ ժառանգութիւն թողնել իւր մերձաւորներուն, ծանօթներուն, բացի եկեղեցուն, Աստուածահաճոյ եւ բարեգործական հաստատութեանց, եթէ կտակը օրինական է, ըստ երկրի օրինաց: Եթէ վախճանածը յեւէ կտակ չունի թողած եւ կամ կտակը օրինական չէ, ժառանգութեան միակ իրաւատէրն է Առաջնորդը:

Ծանօթ.— Կտակի օրինական ըլլալը կամ ոչ

կորոշուի ըստ Ամերիկայի տեղական եւ ըստ Հայ Եկեղեցու օրինաց :

Յօդ. 180.— Եկեղեցւոյ Սարկաւազները կընտրուին համայնքի ընդհանուր ժողովի մէջ, ինչպէս Հովիւները եւ ընտրութեան գործը վկայականներու հետ կներկայացուի ի տնօրէնութիւն Առաջնորդի :

Ծանօթ.— Կիսասարկաւազներն արտօնութիւն չունին կատարել սրբազնագործ պաշտօնէի պաշտօն, (վերաբերում կատարել, Աւետարան կարդալ) մինչեւ որ եկեղեցւոյ սահմանած աստիճանը չունենան :

Յօդ. 181.— Պաշտօնավարող Եպիսկոպոսներն իրենց անձնական հաճոյքով եւ կամեցողութեամբ եկեղեցու ռեւէ աստիճան տալու իրաւունք չունին ռեւէ մէկին, առանց Առաջնորդի դիտութեան եւ հաճութեան :

ԳԼՈՒԽ Զ.

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 181.— Հովուական Թեմերու ընդհանուր գործերը կը կառավարուին Թեմական Ժողովներով :

Յօդ. 182.— Թեմական Ժողովը կը բաղկանայ ա) Կեդրոնի Հոգաբարձութենէն, բ) Շրջանի ծխական համայնքներու Հոգաբարձութեանց Դիւաններէն կամ անոնց երկ-երկու ներկայացուցիչներէն, գ) Գործակալներէն եւ դ) Կեդրոնական Վարչութեան կողմէն կարգուած առժամեայ Յանձնախումբի Դիւանէն (եթէ կան) :

Յօդ. 183.— Թեմական Ժողովը կը հրաւիրուի եւ կը կառավարուի Կեդրոնի Հոգաբարձութեան Դիւանէն ա) Սահմանուած օրերուն, բ) Երբ Թեմի ռեւէ հոգեւոր, եկեղեցական եւ այլ պահանջի համար կարեւոր համարուի կամ Կեդրոնի Հոգաբարձութենէն եւ կամ Թեմական Ժողովը կազմող Մարմիններու կողմէ :

Յօդ. 184.— Թեմական Ժողովի պաշտօնն է. Ա.— Կարգադրել Թեմական Հովուի ընտրութիւնը.

Բ.— Կարգադրել Քարոզիչներու ընտրութիւնը.

Գ.— Պատրաստել ներքին կանոնադրութիւն իւր Թեմի եկեղեցական գործոց կառավարութեան համար, ուղարկել զայն համայնքի ծխական Հոգաբարձութեանց եւ Գործակալներու, ստանալ եկեղեցւոյ անդամոց դիտողութիւնները, վերջնական սրբագրութեան ենթարկելով ուղարկել զայն Առաջնորդին ի հաստատութիւն :

Դ.— Պատրաստել Թեմի տարեկան ելեւմտացոյցը, բաժնել Հովուական շրջանի համայնքներու վրայ, դանձել եւ բաշխել ըստ նախահաշուի :

Ե.— Լսել Երեսփոխանական Ժողովի, Կեդր. Վարչութեան, Առաջնորդի որոշումները Թեմի համար եւ գործադրել զայն.

Զ.— Կարգադրել այն բոլոր վարչական խընդիրները, որք իրենց կը վերաբերին, եկեղեցական եւ հոգեւոր խնդիրներու համար դիմելով Առաջնորդին :

Յօդ. 185.— Թեմական Ժողովի նախագահն է ի պաշտօնէ Հովիւը, բացի այն պարագաներէն երբ խնդիրը Հովուի անձին, պաշտօնավարութեան կը վերաբերի : Այդ պարագային Առաջնորդը կամ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը կը նախագահէ, հակառակ պարագային տրուած որոշումները պիտի յղուին Կեդրոնական Վարչութեան իրաւասութեան եւ վաւերացման :

Յօդ. 186.— Բացառիկ պարագանրէ զատ Թեմական Ժողովը զոնէ տարին երկու անգամ նիստ կունենայ նկատի առնելու Թեմական հաշուեկէշիւրը, պատրաստելու յաջորդ տարուայ նախահաշիւը, ԼԵ՛սելու Կեդրոնէ եկած առաջարկները :

ԳԼՈՒԽ Է.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ, ԳՈՐԾԱԿԱԼՔ

Յօդ. 186.— Ամերիկայի Հայոց Առաջնորդական Վիճակի մէջ դառնուող իւրաքանչիւր հայաբնակ վայր, մեծ կամ փոքր, կարող է եւ պէտք է ու-

նենայ իւր Հոգաբարձութիւնը:

Յօդ. 189.— Իւրաքանչիւր վայրի մէջ գտնուող Հայ Եկեղեցու անդամոց կանոնաւոր ժողովի մէջ ընտրուած եւ գաղտնի քուէարկութեան իբր արդիւնք, առաւելագոյն քուէ շահած անձեր կընտրուուին Հոգաբարձու:

Ծանօթ.— Ընտրութիւնները կը կատարուին ըստ ընտրական հրահանգի, որի սկզբունքները գործադրելի են նաեւ այլ ընտրութեանց պարագային:

Յօդ. 188.— Իւրաքանչիւր վայրի Հոգաբարձութեանց կազմի թիւը գծուած է տեղական կանոնադրութեան մէջ, որ աւելի պիտի չըլլայ քան 5-7 հոգի, երեք անձնափոխանորդով:

Յօդ. 189.— Հոգաբարձութիւնք կընտրուին երեք տարի ժամանակով:

Յօդ. 190.— Ընտրութեան հետեւանքը Նախագահի եւ ընտրական Յանձնաժողովի կողմէ յատուկ տեղեկագրով կը յղուի Առաջնորդին ի հաստատութիւն:

Ծանօթ.— Ընտրութիւնները չեն կրնար հաստատուիլ Տեղական Հովիւներու կողմէ:

Յօդ. 191.— Հաստատուած Հոգաբարձութիւնը պաշտօնի անցնելով կընտրէ իւր մէջէն իւր Դիւանը, Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, որոնց Նախագահն է, ի պաշտօնէ, տեղական Հովիւը:

Ծանօթ.— Դիւանի ընտրութեան մասին անմիջապէս կը տեղեկագրուի Առաջնորդին:

Յօդ. 192.— Իւրաքանչիւր Թեմի Կեդրոնական Հոգաբարձութեան, ինչպէս եւ եկեղեցիներու Հոգաբարձութեան պաշտօնն է, պարբերաբար գումարուելով (Նախագահութեամբ Հովուին եթէ ունին եւ կամ ներկայ է)

Ա.— Հոգալ ամէն Կիրակի եկեղեցական պաշտամանց անխափան եւ կանոնաւոր կատարման:

Բ.— Յատուկ դպրաց դաս պատրաստելով, հսկել Հովուի դիտութեամբ եւ միջոցով երդեցողութեան կանոնաւորութեան և ներդաշնակութեան:

Գ.— Հոգ տանիլ եկեղեցական տրոց դանձման:

Դ.— Հոգալ եկեղեցւոյ անդամոց թիւը անկեղծութեամբ:

Ե.— Ձանալ կարգադրել ժողովրդեան մէջ պատահած մասնակի վէճերը, ընտանեկան ներքին անհամաձայնութիւնները հաշտարար եղանակով յարգարել:

Զ.— Ըստ կարելոյն մխիթարել աղքատները, հոգալ կարօտեալները, սիրտիւ աջակցել, հովանաւորել որբերը, կազմել մարմին մը, որ աշխատէ հոգալ անոնց կարօտութիւնը գործ հայթայթելով կամ մասնակի օժանդակութեամբ:

Է.— Մատակարարել Եկեղեցու պէտքերը, Թեմական Ժողովի կազմած տարեկան նախահաշուէ կամ Երեսփոխանական Ժողովոյ որոշման համաձայն վճարել Առաջնորդարանի տարեկան տուրքը, ինչպէս նաեւ Քարոզչի, Հովուի եւ այլ եկեղեցական պաշտօնեաներու թօշակները:

Ը.— Ձանալ բարուքել եկեղեցու դանձին վիճակը նորանոր աղբիւրներ գտնելով, կտակներ ընել տալով, յօգուտ եկեղեցու, կալուածներ դնելով, կամ նուիրել տալով:

Թ.— Փոյթ տանել Մայրենի լեզուի զարգացման եւ քաջալերել այդ նպատակին ծառայող ամէն ձեռնարկ, ունենալով սեփական դպրոց փոքրերու համար, բանալ դրադարաններ, ընթերցարաններ, եւ ունենալ հաւաքոյթներ երկսեռ երիտասարդութեան, ինչպէս եւ ծնողներու համար:

Ժ.— Ունենալ Կիրակնօրեայ դպրոց Մայրենի Եկեղեցու Դաւանութիւնը, Աւետարանական բարոյքը մատակարարելու, թէ փոքրահասակներուն եւ թէ մեծերուն:

ԺԱ.— Հոգալ մերձաւոր անհովիւ վայրերն ուղարկելով երբեմնակի իրենց Հովիւը հոգեւոր մխիթարութիւն մատակարարելու եւ եկեղեցական պաշտօն կատարելու համար:

ԺԲ.— Աշխատել եկեղեցու ներքին պայծառութեան, հոգալ եկեղեցական պատշաճ եւ մաքուր զգեստներ ունենալու, հսկել եկեղեցւոյ ներքին կարգապահութեան պաշտամանց ժամանակ, փութալ

տեղեր յատկացնել ուշացողներուն, ի կարգ հրաւիրել անփոյթները, ի հարկին անկարգները դուրս ելլել հրաւիրելով, հսկել եկեղեցու ներքին եւ արտաքին մաքրութեան, ժամակոչի և Բարապանի անփութութեան. եւայլն.

ԺԳ.— Աշխատել ունենալ սեփական գերեզմանատուն, բարեկարգ վիճակին մէջ, օգտագործելով այդ յօգուտ եկեղեցւոյ.

ԺԴ.— Ունենալ առանձին տուփ-գանձանակ յօգուտ Մայր Աթոռի, անոր տնտեսական վիճակի բարուրդման համար: Տարեկան չորս յատուկ կիրակիները առանձին պնակ պտտցնել այդ նպատակով, բացի սովորականէն, այն է Մուտ ի Վիրապ Մ. Լուսաւորչի, Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի Տօնին, Վեհ. Հայրապետի Անուանակոչութեան Օրը, եւ Վարազայ Ս. Խաչի Տօնին:

Ծանօթ.— Գանձանակներէ գոյացած գումարները կը յղուին Կեդրոնական Վարչութեան, փոխադրելու Առաջնորդի միջոցով Մայր Աթոռ:

Յօդ. 193.— Հովուական Թեմի միւս համայնքներու բոլոր Հոգաբարձութեանց (նոյն եւ Առաջնորդական Թեմերու համար) պաշտօնը համաձայն եւ համանման է Յօդ. 192-ի ընդհանուր կէտերուն, ուր եկեղեցի կայ:

Ծանօթ.— Այդպիսի Հոգաբարձութիւնք, ինչպէս եւ գործակալները, մասնաւորապէս ամէն ջանք պիտի գործ դնեն տեղական ցրուած ժողովուրդին մէջ վառ պահել Մայրենի Եկեղեցու եւ ազգասիրութեան սէրը: Կարևոր դէպքերում Ս. Խորհրդոց մասակարարութեան համար դիմել Կեդրոնի Հոգաբարձութեան, կամ Հովուին, Առաջնորդին (եթէ Առաջնորդական Թեմ է), գանձել եկեղեցական տուրքերը, գործադրել ըստ հրահանգի Թեմական ներքին կանոնադրի:

Յօդ. 194.— Իւրաքանչիւր տարու վերջը Հոգաբարձութիւնը պարտաւորութիւն ունի Տեղեկագիր ներկայացնել իրենց գործունէութեան մասին Առաջնորդին, ինչպէս եւ հաշիւները ի քննութիւն Կեդրոնական Վարչութեան յղել, նախապէս ներկայ-

յացնելով զայն անդամական տարեկան ժողովին:

Յօդ. 195.— Ինչպէս Հոգաբարձութիւնք, նոյնպէս եւ բոլոր եկեղեցական պաշտօնէութիւնք, իրենց պաշտօնավարութեան շրջանն աւարտելէն վերջըն իսկ պարտաւոր են շարունակել իրենց պաշտօնը մինչեւ նոր ընտրուածները յաջորդեն, որոնց պարտաւոր են յանձնել պատշաճ ստացողական-յանձնողական արձաագրութեամբ իրենց բոլոր հաշիւները, մատենաները, եկեղեցու գոյքը, կալուածագրերը, կալուածական հաշիւները, վաւերաթղթերը, դործերը, եւայլն, երկու կողմի ստորագրութեամբ:

Յօդ. 196.— Հոգաբարձութիւնը ունի իւր պաշտօնական կնիքը ընդունուած Առաջնորդէն:

Յօդ. 197.— Հոգաբարձութիւնը պարտաւոր է ունենալ Մայր Մատենան, որու մէջ նշանակուած պիտի ըլլան ա) Եկեղեցու բոլոր արդուզարդը, Ս. Անօթները, զգեստները, բ) Կալուածները (անունանուն, ո՞ւր, ո՞ր փողոցի վրայ գտնուելը) մանրամասն նկարագրութեամբ, գ) Կալուածական վաւերագրերը: Բ.— Հաշուեմատեան ելումուտքի, պահելով զայն ըստ Սահմանադրութեան որոշ յօդուածներու սկզբունքներուն: Գ.— Դիւան, ուր պիտի պահուին բոլոր գրութիւնները, հաշիւները, վաւերաթղթերը եւայլն:

Յօդ. 198.— Այն վայրերն ուր Հայ Եկեղեցու գաւակներն նուազ թիւ կ'կազմեն Առաջնորդը (եթէ Առաջնորդական Թեմ է) եւ կամ Հովիւը տեղին ժողովրդեան ընտրել կուտան Գործակալ մը, որ տեղին վրայ նոյն պաշտօնն ու պարտիքն ունի, ինչ որ Հոգաբարձութիւնը:

Ծանօթ.— Եթէ տեղին ժողովուրդը ինքն իւր ընտրական իրաւունքը չգործադրէ Առաջնորդը կամ Հովիւը անոնց մէջէն կընտրեն եւ կնշանակեն մէկը, նոյն պաշտօնին համար, յայտնելով այդ մասին ժողովրդեան:

Ծանօթ. Բ.— Հովիւը իւր ընտրածի մասին պարտաւոր է տեղեկագրել Առաջնորդին ի հաստատութիւն:

Յօդ. 199.— Հոգաբարձական կազմը լրիւ պահպանելու համար հրատարակած Հոգաբարձուի փոխարէն կը հրաւիրուի յաջորդ (առաւելագոյն քուէ ստացող) անձնափոխանորդը:

Յօդ. 200.— Հոգաբարձութեան կազմէն հրատարող անդամները պարտաւոր են իրենց հրատարականը ներկայացնել Հոգաբարձութեան միջոցով Առաջնորդին, որը աչքի առաջ ունենալով հրատարականի պատճառները, Հոգաբարձական մարմնի կարծիքը, կը կարգադրէ, ընդունելով հրատարականը կամ մերժելով:

Հրատարականը ընդունուելու դէպքին միայն կհետեւի հետեւեալ անձնափոխանորդի պաշտօնի կոչուելը:

Յօդ. 201.— Ընտրուած Հոգաբարձուն եթէ չի կամենայ ընդունիլ պաշտօն եւ հրատարական կուտայ, պարտաւոր է հրատարականը ներկայացնել ընտրական Յանձնաժողովին կամ ընտրութեան Նախագահի, որոնց կարծիքի հետ կյղուի Առաջնորդին:

Յօդ. 202.— Պաշտօնի կոչուած Հոգաբարձուն պարտաւոր է միշտ ներկայ ըլլալ կանոնաւորապէս նիստերուն, եթէ չկրնար ներկայ ըլլալ, պարտաւոր է զբաւոր կանխօրէն տեղեկացնել Ատենապետին այդ մասին:

Ծանօթ.— Ծարունակարար առանց օրինական պատճառի նիստերուն չորս անգամ չմասնակցող անդամը, ըստ ինքեան հրատարած կը համարուի եւ անոր փոխարէն կը հրաւիրուի անձնափոխանորդը:

Յօդ. 203.— Հոգաբարձութեան նիստը օրինական է երբ հասարակ մեծամասնութիւն ունի, այդ եղանակով կվճռուի նաեւ Հոգաբարձական ժողովի որոշումները, ձայներու բաժանման դէպքին՝ Նախագահի ձայնը վճռական է:

Ծանօթ.— Նախագահի բացակայութեան միջոցին նա իր պաշտօնը կփոխանձէ ժողովականներէն մէկուն:

Յօդ. 204.— Իւրաքանչիւր նիստ պիտի արձանագրուի Արձանագրութեանց առանձին մատենանին

մէջ: Իւրաքանչիւր արձանագրութիւն պէտք է վաւերացուած ըլլայ Նախագահի, Ատենապետի եւ Ատենադպրի կողմէն, անոնց ստորագրութեամբ:

Ծանօթ.— Նախագահի բացակայութեանը ժողովները անոր ստորագրութիւնը չեն կրեր, իսկ եթէ նկատողութիւններ ունի ժողովին դէմ, իբրեւ սպօրիննի, Հոգաբարձութեան կարծիքի հետ պիտի ներկայացնէ Առաջնորդին:

Յօդ. 205.— Մեծամասնութիւնը կորցրած Հոգաբարձութեան (երբ անձնափոխանորդներով իսկ չէ կարելի մեծամասնութիւն կազմել) ժամանակը չլրացած կը ձեռնարկուի նոր ընտրութեան, որու մասին Հովիւր եւ Ատենապետը կը տեղեկագրեն Առաջնորդին:

Յօդ. 206.— Երբ յաջորդաբար երկու անգամ քուէարկութեամբ ընտրուած Հոգաբարձուները հրատարին, կամ տեղական երկպառակութեան պատճառով օրինաւոր քուէարկութեամբ հնար չըլլայ Հոգաբարձութիւն ընտրել, այն ատեն Հովիւր Առաջնորդին տեղեկագրելով առժամանակեայ Հոգաբարձութիւն նշանակել կխնդրէ, ցոյց տալով կարող անձեր եւ կամ Առաջնորդին կը վերապահուի ըստ իւր խոհականութեան նոր, առժամեայ Հոգաբարձութիւն նշանակել (նախկիններէ կամ նոր անձեր), որոնց պաշտօնավարութեան չըջանը կը տեւէ վեց ամիսէ մինչեւ տարի մը միայն:

Ծանօթ.— Եթէ Հովիւ չկայ, Ընտրական Յանձնաժողովը կը կատարէ Հովուի պարտաւորութիւնը յօդուածիս նկատմամբ:

Յօդ. 207.— Հոգաբարձութեանց դէմ եղած դանդատները կյղուին Հովուին, եթէ Կեդրոնի կամ Ծխական Հոգաբարձութեան դէմ է. Հովիւր իւր կարծիքի եւ Հոգաբարձութեան բացատրութեան հետ կուղարկէ դայն Առաջնորդին: Իսկ եթէ Առաջնորդական թեմ է, գանգատը կը յղուի ուղղակի Առաջնորդին, որը կարելոր բացատրութիւն ստանալէ յետոյ կը տնօրինէ, երկու պարագայինն ալ, զարժանն՝ ըստ Սամանագրութեան:

Յօդ. 208.— Քարոզիչներու, Հովիւներու եւ

Հողաբարձութեան մէջ տեղի ունեցած անհամա-  
ձայնութեանց համար հարկ է դիմել Առաջնորդին,  
ըստ տրամադրութեան Սահմանադրութեան:

Յօդ. 209.— Եկեղեցւոյ Աւագ-Սարկաւազները  
կընտրուին համայնքի ընդհանուր ժողովի կողմէն  
իրենց տարեւոր ժամանակի հրաւէրը լրացնելէ  
ետք, որ կը կատարուի Հողաբարձութեան կողմէ:

ԳԼՈՒԽ Ը.

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՀԱՍՈՅԹՔ, ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 210.— Ամերիկայի մէջ դսնուող ամէն  
Հայ, որ ծնուած է, Մկրտուած Հայ Եկեղեցւոյ ծո-  
ցին մէջ, անդամ է Հայ Առաքելական Եկեղեցւոյ,  
իրաւունք ունի վայելելու նոյն եկեղեցւոյ հոգածու-  
թիւնը եւ կրօնական մխիթարութիւնը, պայմանաւ  
որ հաւատարիմ ըլլայ իւր Մօրը:

Յօդ. 211.— Իբրեւ եկեղեցւոյ սրտացաւ զաւակ  
իւրաքանչիւր անհատ պարտաւորութիւն ունի եկե-  
ղեցու հոգածութեան եւ կրօնական մխիթարութեան  
գործը դիւրացնելու համար իւր նիւթական եւ բա-  
րոյական օժանդակութիւնը բերել:

Յօդ. 212.— Իւրաքանչիւր անհատ, չափահաս,  
քսանը մէկ տարեկանէն վեր, պարտաւոր  
է ամէն տարի Ազգային Տուրք վճարել ըստ իւր կա-  
րողութեան, իւր բնակավայրի Հողաբարձութեան  
կամ Գործակալի միջոցով:

Յօդ. 213.— Անոնք որ կրնան ու չեն ուզեր վը-  
ճարել իրենց այդ բնական եւ բարոյական պարտքը,  
եկեղեցւոյ ազամ մնալով հանդերձ, ձայնի եւ քուէի  
իրաւունք չեն ունենար եկեղեցւոյ ընտրական գոր-  
ծոց եւ ժողովոց որոշումներու ատեն:

Ծանօթ.— Աղքատ եւ չքաւորներն ազատ են  
տուրքէ, եթէ ժողովը կամ Հողաբարձութիւնը կը  
վկայեն այդ, վայելելով բոլոր իրաւունքները:

Յօդ. 214.— Ազգային Տուրքը կերթայ ի մատա-  
կարարութիւն եկեղեցւոյ եւ ազգային հիմնարկու-  
թեանց, ըստ որոշման Կեդր. Վարչութեան, այն է.

Ա.— Առաջնորդարանի պահպանութեան.

Բ.— Եկեղեցիներու պայծառութեան.

Գ.— Քարոզիչներու հոգածութեան.

Դ.— Շրջիկ Հովիւներու պահպանութեան.

Ե.— Դպրոցներու սատարումի եւ նորերը  
հիմնելու.

Զ.— Կիրակնօրեայ դպրոցներու ամսան.

Է.— Եկեղեցական կրթուած եւ պատրաստ-  
ուած պաշտօնեաներու ուսման.

Ը.— Ազգային տարադէպ աղէտներու հոգա-  
ծութեան.

Թ.— Որբերու պահպանութեան.

Ժ.— Մայր Աթոռի պայծառութեան եւ ա-  
նոր հաստատութիւններու ապահովութեան:

Յօդ. 215.— Այս նկատումով իւրաքանչիւր ան-  
հատի տարեկան տուրքի վճարը պակաս պիտի չըլ-  
լայ քան հինգ տոլար, իսկ աւելի ըստ կամս:

Յօդ. 216.— Ամէն տարեչրջանի առաջին եռամ-  
սեակին եկեղեցւոյ տարեկան տուրքերը դանձած  
պիտի ըլլան տեղական Հողաբարձութեանց միջոցով  
եկեղեցւոյ եւ անոր Կեդրոնական Վարչութեան գոր-  
ծը դիւրացնելու նպատակով:

Յօդ. 217.— Գանձումները դիւրացնելու համար  
Հողաբարձութիւնը, Գործակալը, պարտաւորու-  
թիւն ունին եկեղեցւոյ բոլոր անդամներուն տար-  
ուայ վերջին ամսու առաջին կէսին յիշեցնել անոնց  
պարտքը (եթէ մինչ այն վճարումը կատարուած չէ)  
խնդրելով յղել իրենց տարեկան վճարումները ա)  
անձամբ վճարելով, բ) իրենց տուրքերու պիտակը  
(չէքը) յղելով Գանձապահին կամ Ատենապետին:

Ծանօթ.— Իւրաքանչիւր անդամ առանց սղա-  
սելու ազգաբարձութեան ինքն եւս պարտաւոր է իւր  
պարտքը վճարել առանց յիշեցնելու:

Յօդ. 218.— Եկեղեցւոյ տարեկան տուրքերէն  
զատ թեմերու եւ եկեղեցիներու արդիւնքն են ա)  
Պսակի, եւ բ) Մկրտութեանց տուրք (որոնց քանա-  
կը կորոշէ Կեդրոնը եւ թեմական կանոնադրի մէջ  
կը մտնէ), գ) Իւղազին, դ) Թաղումն, ե) Եկեղեց-  
ւոյ պնակներէն մուտք, զ) Կամաւոր նուէրներ, է)

Պատահական մուտք, ը) Հանդանակութիւններէ (թ) Հանդէսներէ, ժ) Կալուածական եկամուտ, եւայլն:

Յօդ. 219.— Հոգաբարձութիւնը, Եկեղեցիք Իրաւունք չունին իրենց գանձի մէջ պահելու Առաջնորդարանի գուտ եկամուտները, որոնց տուրքի չափը որոշուած կըլլայ Առաջնորդարանէն եւ որ պարտաւոր են գանձել ու Առաջնորդարան յղել իսկոյն:

Յօդ. 220 Առաջնորդական Հասոյթները կը գանձուին Հոգաբարձութիւններէ, Կեդր. Վարչութեան կողմէ:

ԳԼՈՒԽ Թ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ, ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Յօդ. 221.— Իւրաքանչիւր Համայնք կրնայ ունենալ իր սեփական Եկեղեցին ու յարակից շէնքեր:

Ծանօթ.— Յարակից շէնքերը պիտի Հասկնալ Եկեղեցուն կից կամ Հեռու՝ Հովուատուն, դպրոցը, ընթերցարանի, դրադարանի, Հասարակաց սրահի եւայլն յարակից կամ միացեալ շէնքեր:

Յօդ. 222.— Եկեղեցիները կրնան իբր իրաւատէր Հաստատութիւններ ունենալ սեփական կալուածներ, այն է ա) տուն, բ) խանութ, գ) Հիւրանոց դ) այգի, եւայլն:

Յօդ. 223.— Եկեղեցւոյ բուն շէնքը, ինչպէս եւ անոր բոլոր անշարժ կալուածները չեն կրնար պատկանիլ անհատներու, այլ սեփականութիւնն են Համայնքի, աղգային ընդհանուր սեփականութեան Հիմունքներով:

Յօդ. 224.— Իւրաքանչիւր Եկեղեցի կրնայ երեւան դալ տեղական օրէնքի առաջ իբր Հաստատուած եւ անձնաւորեալ կազմակերպութիւն (Incorporation), պայմանաւ որ Հաստատութիւնը ըլլայ Առաջնորդարանի անունով եւ տեղական Հոգաբարձութիւնը ներկայացնէ Առաջնորդարանի ներկայացուցիչ մարմինը, (Trustees):

Յօդ. 225.— Առաջնորդարանը ներկայացնելով իբր ամբողջ Ամերիկայի մէջ գտնուող բոլոր եկե-

ղեցիներու, անոնց կալուածներու ու սեփականութեանց իրաւատէր մարմինը ա) Կը ճանչնայ անոնց իւրաքանչիւրին օրինական իրաւասութիւնը, բ) Իրաւունք չունի ո՛չ վաճառելու, ո՛չ գրաւ դնելու, ո՛չ օտարացնելու գանոնք:

Յօդ. 226.— Նոր կառուցուելիք կամ գնելիք եկեղեցւոյ Համար կը կազմուի Հոգաբարձութեան ներկայացուցութեամբ, առանձին Յանձնաժողով մը, որուն Նախագահն է Քարոզիչը (եթէ չկայ Հովուը): Երկուքը եղած պահուն՝ Հովուը կը Համարուի Փոխ-Նախագահ:

Ծանօթ.— Յանձնաժողովը կը Հաստատուի Առաջնորդին կողմէն:

Յօդ. 227.— Յանձնաժողովը եկեղեցի կառուցանելու կամ գնելու Համար ա) Պարտաւոր է դիմել Առաջնորդին անոր Համաձայնութիւնը ստանալ, բ) Համաձայնութիւնը ստանալէ ետքը պարտաւոր է ներկայացնել տեղին եւ շէնքին յատկազօծը, որ պիտի ստանայ Առաջնորդին վերջնական Հաւանութիւնն ու Հաստատութիւնը:

Ծանօթ.— Յատկազօծը պէտք է ներկայացնել երկու օրինակ, որոնց մին, վերջնականը, կը մնայ Առաջնորդարանի Դիւանի մէջ:

Յօդ. 228.— Նորակառոյց եկեղեցւոյ Հիմարկութեան կամ եկեղեցւոյ օժման մասին Յանձնաժողովը կանխօրէն պարտք ունի Առաջնորդին դիմել եւ սպասել անոր կարգադրութեան:

Ծանօթ.— Նոր կառուցուող եկեղեցիներու խորաններն ուղղուած պիտի ըլլան, ըստ Հայ Եկեղեցւոյ կարգաց, դէպ Արեւելքն միայն: Իսկ այն եկեղեցիք որ պատրաստ կը գնուին կրնան խորանները ունենալ այնպէս, ինչպէս կան:

Յօդ. 229.— Տեղական Համայնքը կամ Հոգաբարձութիւնները ա) Իրաւունք ունենալով ըստ ամենայնի օգտուիլ եկեղեցիէն, յարակից շէնքերէն, կալուածներու եկամուտներէն, տեղական եկեղեցական պէտքերու Համար, բ) Իրաւունք չունին զանոնք օտարացնելու, վաճառելու, գրաւ դնելու առանց Առաջնորդի եւ Կեդր. Վարչութեան կանխա-

գոյն գիտութեան եւ վերջնական հաճութեան, իբր ազգային ընդհանուր սեփականութիւն:

Յօդ. 230.— Եկեղեցիները, իբր սրբավայրեր չեն կրնար վաճառքի հանուիլ առանց Առաջնորդի, իբրեւ Վեհ. Հայրապետի Ներկայացուցչի, գիտութեան եւ թոյլտուութեան:

Յօդ. 231.— Այն բոլոր եկեղեցիները կամ անոնց կալուածները որոնք արձանագրուած են անհատներու «արտօնագրութեան» (Charter) տիրուտով, այդ անձերը եկեղեցւոյ սովորական անդամէ մը աւելի առանձնաշնորհում չեն վայելեր, ուստի եւ այդպիսիները ըստ ամենայնի ենթակայ են յօդուած 229-ի եւ 230-ի:

Յօդ. 232.— Ուելք քաղաքի, շրջապահի, համայնքի հայ գաղութը եթէ պակսելու ըլլայ եւ նոյն տեղը այլեւս հնարաւոր չըլլայ եկեղեցի պահպանել եւ ունենալ, նոյն տեղի մէջ գտնուող եկեղեցական եւ յարակից ազգային բոլոր շէնքերը ա) Կը կառավարուին Առաջնորդին կողմէ, իբր Ներկայացուցչի Եկեղեցւոյ Պետի, բ) Այդ մասին կը տեղեկագրէ Կեդրոնական Վարչութեան գիտութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին եւ եթէ պէտք զգացուի միմիայն անոր արտօնութեամբ կը վաճառուին, կը փոխարինուին, գ) Անոնցմէ գոյացած հասոյթը կը գործադրուի Ամերիկայի գաղութին մէջ կրօնական նման հաստատութեանց եւ նպատակներու, ձեռամբ Առաջնորդին:

Յօդ. 233.— Իւրաքանչիւր եկեղեցւոյ հաստատուած անձնաւորեալ կազմակերպութեան դատական վճռի (Act of Incorporation) իսկական օրինակը պիտի յղել Առաջնորդին, իբր վերին հսկողի բոլոր եկեղեցական սեփականութեանց եւ իրաւատէր: Իսկ պատճէն կը մնայ Հոգաբարձութեանց Դիւանի մէջ:

ԳԼՈՒՆ Ժ.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Յօդ. 234.— Հայ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ առանց սեռի խտրութեան եւ 21 տարին լրա-

ցուցած՝ իրաւասու անդամ է քուէի եւ եկեղեցու գործերու մէջ ձայն ունենալու:

Յօդ. 235.— Ընտրելու եւ ընտրուելու իրաւունք ունին անոնք, որ եկեղեցու տարեկան Տոմարին մէջ արձանագրուած են, ընտրութենէն վեց ամիս առաջ:

Յօդ. 236.— Ընտրութեան քուէի իրաւասութիւն ունին եկեղեցու Քարոզիչը, Հովիւը եւ Աւագ-Սարկաւազը, առանց տուրք վճարելու:

Ծանօթ.— Միւս պաշտօնէութեան անդամները եթէ իրաւասու չեն, ըստ ընդհանուր հիմանց Սահմանադրութեանս, չեն կրնար մասնակցիլ ընտրութեանց:

Յօդ. 237.— Նոյն քաղաքի մէջ անպաշտօն քահանաները, եթէ հաստատ բնակութիւն ունին նոյն քաղաքի կամ համայնքի շրջանի մէջ, կրնան ընտրուիլ ա) Ընտրական Յանձնաժողովի անդամ, բ) Վերստուգիչ Յանձնաժողովի անդամ, գ) Ատենապետ Ընտրական Ժողովի, Անդամական Ժողովի, ենթարկուելով Սահմանադրութեան ընդհանուր պահանջներուն, իբրեւ անդամ եկեղեցւոյ եւ համայնքի:

Յօդ. 238.— Բնակավայրը փոխած ազգայիններ եւս կրնան քուէարկութեան մասնակցիլ, եթէ նախորդ բնակավայրի Հոգաբարձութեան նոյն տարուայ տուրքի ըկալագիրը կամ վկայականը ներկայացնեն:

Յօդ. 239.— Պաշտօնավարութեան շրջանն աւարտած Հոգաբարձութիւնը առ նուազն մի ամիս առաջ իւր ժամանակամիջոցէն, կը կազմէ Ընտրական Յանձնաժողով, ըստ Թեմական կանոնադրի, ընտրութիւնը կատարելով կամ ինքը եւ կամ ժողովուրդը:

Յօդ. 240.— Ընտրական Յանձնաժողովը կը գումարուի նախագահութեամբ Հովուի կամ ի բացակայութեան անոր (ինչպէս եւ Առաջնորդական Թեմերու մէջ) Առաջնորդի կամ Կեդր. Վարչութեան ներկայացուցչի, եւ կը պատրաստէ ցանկ մը, ընտրելիներու անունը քաղելով տեղական Անձնահամա-

րի Տոմարէն :

Յօդ. 241.— Ընտրական ցանկը, Ընտրական Յանձնաժողովի հրաւիրագրին հետ, կուզարկուի ամէն ընտրողի, որոչելով, ա) Օրակարգի խնդիրները, բ) Ընտրութեան օրը, ժամը եւ տեղը :

Յօդ. 242.— Ընտրութեան օրը, Ընտրական Յանձնաժողովը, նախագահութեամբ Հովուին կամ ներկայացուցչին, կը հսկէ քուէարկութեան եւ քուէհամարին :

Յօդ. 243.— Ժողովը կը վարէ Ընտրական Յանձնաժողովի Դիւանը :

Յօդ. 244.— Եթէ հնար չըլլայ նախապէս Ընտրողական Յանձնաժողով ունենալ, Հոգաբարձութիւնը հրաւիրելով ժողով՝ ըստ առաջարկութեան նախագահի կամ ըստ ցանկութեան ժողովոյ առ տեղեան կընտրուի Ընտրական Յանձնաժողով, որ կ'պատրաստէ ընտրական ցանկը եւ կը ներկայացնէ նախագահին :

Յօդ. 245.— Անդամական Տոմարէն մի առ մի կկարդացուին իրաւասու ընտրողներու անունները, որոնք անձամբ կուզան իրենց քուէները տալու կամ քուէի տուփը ձգելու :

Յօդ. 246.— Քուէատուփերու վրայ կը հսկէ Ընտրական Յանձնաժողովը եւ եթէ շատ են տուփեր նոր քուէահսկիչներ եւս կը նշանակէ :

Յօդ. 247.— Ընտրելաց ցանկը պատրաստուած ըլլալով լոկ դիւրութեան համար, իւրաքանչիւր քուէարկու ազատ է այլ անձերու եւս քուէ տալ, ներկայ եղածներէն կամ դրսէն եւս, պայմանաւ որ ընտրուելու իրաւասութիւն ունենայ :

Յօդ. 248.— Քուէները պէտք է գրուին որոշ, (ընտրեալին անուն, ազգանուն, և եթէ նոյն անունով ուրիշ ալ կայ, նաեւ ծննդավայրը) :

Յօդ. 249.— Իւրաքանչիւր քուէարկու պարտաւոր է գրել այնքան անուն, որքան կը պահանջուի ժողովէն, աւելիները չեն հաշուիր :

Յօդ. 250.— Անգրագէտ քուէարկուն կրնայ նախագահին գաղտնի յայտնել իւր ընտրելիները, ստանալով գրուածներու անունները եւ անձամբ ձգելով

քուէատուփը :

Յօդ. 251.— Բանաւոր պատճառով քուէարկութեան ներկայ չեղող անդամները իրենց քուէն կուզարկեն փակ ծրարով նախագահի անուան, որը ըստ ցակայի անուան ընթերցումի ատեն (եւ կամ յետոյ) ստորագրութիւնը ճշդելէ վերջ անոնց քուէները տուփը կը ձգէ :

Ծանօթ.— Բանաւոր պատճառները վաղօրօք կորոշուին Ընտրական Յանձնաժողովէն, առանձին արձանագրութեամբ :

Յօդ. 252.— Բացակայ, իրաւասու, անդամները կրնան իրենց քուէն եւ ձայնը յանձնել ժողովին ներկայ եղող իրաւասու անձին, այդ մասին առանձին նամակ յղելով ժողովի նախագահին : Իւրաքանչիւր քուէարկու բացի իւր քուէէն կրնայ ունենալ այլ եւս մի քուէ (ընդամէնը երկու) եւ ոչ աւելի :

Յօդ. 253.— Քուէահամարը կսկսուի ճիշտ որոշեալ ժամուն եւ կզոցուի ճիշտ որոշեալ ժամուն, անկից վերջ եկած քուէները ոչ կընդունուին, եւ ոչ հաշուի կառնուին :

Յօդ. 254.— Ընտրութեան համար որոշուած օրը եթէ Տոմարին մէջ արձանագրուած, իրաւասու ընտրողներու մի երրորդ մասը ներկայ չէ ժողովին, ընտրութիւնը կը յետաձգուի երկրորդ ժողովին (հրաւիրով կամ առ տեղեալ տեղն ու ժամը որոշելով), որի ներկաներուն թիւը եթէ պակաս չէ քան մէկ ութերորդը վաւերական կընդունուի և ընտրութեան կը ձեռնարկուի :

Յօդ. 255.— Քուէահամարը սկսելէ առաջ ընտրողներու բերանացի կամ քը կառնուի ընտրութեան ելքի բացարձակ թէ համեմատական ըլլալուն համար :

Ծանօթ.— Բացարձակ ընտրութիւն կը համարուի, երբ ընտրողներու թուին կէսէն մէկ քուէ իսկ աւելի ստացողը կրնայ ընտրեալ համարուիլ : Համեմատական կը համարուի այն ընտրութիւնը, երբ ընտրողներու քուէհամարներու արդիւնքով առաւելագոյն քուէ շահողները ընտրուած կհամարուին :

Յօդ. 256.— Բացարձակ քուէարկութեան պա-

հանջի ատեն, եթէ պահանջուած քանակի անդամները ամէնքն եւս չընտրուին, ա) Ըտրուած կը համարուին եղած քուէառուները, բ) Մնացածի մասին երկպատիկ ցանկ մը պատրաստելով կամ առտեղեակըն կը ձեռնարկեն մնացածներու ընտրութեան եւ կամ ուրիշ օր մը կորոշուի մնացեալներու քուէարկութեան համար, եւ առաւելագոյն քուէ ստացողները կը համարուին ընտրուած:

Յօդ. 257.— Քուէարկութիւնը կրնայ կատարուիլ ա) Բացայայտ, ձեռամբարձ քուէարկութեամբ եթէ քուէարկութիւնը առանց տուիներու պիտի կատարուի, բ) Փակ քուէարկութեամբ:

Ծանօթ.— Եթէ իրաւասու անդամներէն մէկն իսկ ձայն տալու ըլլայ փակ քուէարկութեան, ընտրութիւնն անպայման կկատարուի այդ եղանակով, սոմսերով:

Յօդ. 258.— Քուէհամարը կը կատարուի հրապարակաւ, բարձրաձայն եւ կարճանազրուի Նախագահի կողմէն նշանակուած երեք անձի կողմէն:

Ծանօթ.— Կարդացուած քուէատոմսերը կիսով չափ միայն պիտի պատուին (որպէսզի հարկ եղած պարագային ստուգութիւն կատարելու հնարաւորութիւն ըլլալ) եւ առանձին արկղ կնետուին, որոնք քուէարկութեան լմնալէն վերջ կոչնչացուին առանց ոեւէ մէկու սեփականութիւն դառնալու:

Յօդ. 259.— Ընտրութեան արդիւնքը կանցնէ ժողովի արձանագրութեան մէջ, որը կստորագրուի Նախագահէն, Ընտրական Յանձնաժողովի Դիւանէն եւ կը յղուի ուր որ անկ է ի վաւերացում:

Յօդ. 260.— Ընտրութեան դէմ բողոքողները պարտաւոր են ընտրական ժողովի մէջ իսկ յայտնել իրենց բողոք ունենալու պարագան եւ ա) կամ արձանագրել տալ իրենց բողոքը, եւ բ) Եթէ Նախագահը ոեւէ պատճառով յարմար չհամարէ արձանագրել այն, ընտրութեան արձանագրութեան տակ դրել միայն «Բողոք ունիմ» բառերը եւ ներկայացընել իւր գրաւոր բողոքը Նախագահին, որը պարտաւոր է այն եւս յղել Առաջնորդին:

Ծանօթ.— «Բողոք ունիմ» դրած անձը պարտա-

ւոր է իւր անձնական (եւ ոչ հաւաքական) բողոքը 24 ժամու ընթացքին ներկայացնել ընտրութեան Նախագահին, հակառակ պարագային չի ընդունուիր իւր բողոքը եւ անհետեւանք կմնայ:

Յօդ. 261.— Բողոքելու իրաւունք չունին ա) Տեղական Անձնահամարի Տոմարին մէջ չնշանակուած անձերը, բ) Ժողովին չմասնակցող անդամները, գ) Իրենց քուէն ուրիշին յանձնած անդամները, դ) Նամակով քուէարկութեան մասնակցող անդամները, ե) Եկեղեցու անչափահաս անդամները:

Յօդ. 262.— Ընտրութեան մասնակցելու եւ ընտրուելու իրաւասութիւն ունին անոնք որ կենթարկուին յօդուած 37-ի:

Յօդ. 263.— Ընտրութեանց այս հրահանգը կրնայ յարմարցուիլ եւ կիրարկուիլ ամէն տեսակ ժողովրդային ընտրութեանց:

ԿՏԱԿ

Յօդ. 264.— Եթէ երբ եւ իցէ Ամերիկայի մէջ գոյութենէ դադրի Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը եւ այլեւս այդ երկրի մէջ գոյութիւն չունենայ Հայ Առաք. Եկեղեցին, իբրեւ Վարչական կազմ, ապա անոր բոլոր եկեղեցիները, այդ եկեղեցիներուն պատկանած բոլոր շարժական գոյքը, գանձը, կալուածները կանցնին ի ժառանգութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իբրեւ իրաւատէր բոլոր Հայ Եկեղեցիներու:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 265.— Սահմանադրութեանս իւրաքանչիւր յօդուածի կամ ամբողջ բաժիններու նկատմամբ իրաւունք ունի փոփոխութեան ենթարկելու Ընդհանրական Հայրապետը, այդ մասին պատշաճ եղանակով յայտնելով Երեսփոխանական ժողովին, Առաջնորդի միջոցով: Նոյն նկատմամբ, այն է, իւ-

րաքանչիւր յօդուածի կամ ամբողջի մէջ փոփոխութիւն կատարելու համար կարող են կարծիքներ եւ ցանկութիւններ յայտնել ա) Առաջնորդը, բ) Երեսփոխանական Ժողովի մէջ մի անդամ, գ) Երեսփոխական Ժողովը, դ) Վարչական բոլոր կազմերու անհատները եւ կամ վարչութիւնները հաւաքաբար, զ) Հոգեւոր պաշտօնեաները, ե) Համայնքներու անդամները:

Յօդ. 266.— Փոփոխութեան առաջարկներ պիտի ըլլան յանուն Առաջնորդի ա) գրաւոր, պատճառաբանուած եւ գ) փոփոխելիքի բարեձեւեալի բանաձեւը դնելով:

Յօդ. 267.— Առաջնորդը ստացուած կարծիքները կեղքոնական Վարչութեան տանելէն յետոյ, կը ներկայացնէ դայն Երեսփ. Ժողովին:

Յօդ. 268.— Սահմանադրութեանս վերաքննութեան իրաւունքը (մասնակի թէ ամբողջական) կը պատկանի Երեսփոխանական Ժողովին:

Յօդ. 269.— Փոփոխութիւնք, պատճառաբանեալ, կը ներկայացուին ի հաստատութիւն Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին, որմէ հաստատութիւն գտնելէ յետոյ միայն գործադրութեան կանցնի, մինչ այն նախկինն անփոփոխ գործադրելով:

Ի \_\_\_\_\_ 19

Ի \_\_\_\_\_

Խոստանամ յանուն Աստուծոյ իմոյ եւ Փրկչին, ըստ թելադրութեանց խղճիս, ըստ կարողութեան մտացս եւ ըստ գորութեան հոգւոյս, յօրէ մտանելոյ մերոյ ի պաշտօն Առաջնորդութեան Հայոց Ամերիկայի, ըստ Ս. Կոնդակի Ն. Վեհափառութեան Ընդհ. Հայրապետի ազգիս ի \_\_\_\_\_ թիւ \_\_\_\_\_ լինել հաւատարիմ վարդապետ դաւանութեան Ս. Եկեղեցւոյս, ըստ պարտուց պաշտամանս գիտ լինել կարգաց, սահմանաց; ծիսի նորա, լինել ըստ ուխտիս հնազանդ իրաւանց, հրամանաց եւ իշխանութեան Վեհ. Հայրապետի Ամենայն Հայոց, լինել պահպան անսայթափ գործադրութեան հաստատեալ Սահմանադրութեան վիճակիս, ծառայել ըստ խղճի մտացս եւ ըստ կարողութեանս յօգուտ ժողովրդեանս, որում Առաջնորդ ի Տեառնէ կոչեցաք լինել, գիտ լինել կարգապահութեան, օրինականութեան եկեղեցականաց, ու ընդ իշխանութեամբ Մերով եւ որք ի սահմանս վիճակի Մերոյ, լինել արդարադատ յում եւ յոր իցէ:

Եւ եթէ դէպ լիցի ըստ կամս Տեառն իմոյ եւ կենսատուի փոխիլ յաստեացս ամենայն ինչ, որ ի Տեառնէ տուաւ մեզ, որպէս ինչք եւ ստացա՞ծ, կայ եւ մնայ ի սեփականութիւն ժառանգութեան Մեծի Աթոռոյն, եւ Մօրս իմոյ հոգեւորի, Ս. Էջմիածնի ի պայծառութիւն նորա:

Ներկայ էաք  
Անդամք Երեսփ. Ժողովոյ  
Անդամք կեղր. Վարչութեան

Առաջնորդ Հայոց Ամերիկայի



Ձեռի Բ. (Վասն Կուսակրօն Պաշտօնէից)

Ի ..... 19

Ի .....

Խոստանամ յանուն Աստուծոյ եւ Փրկչին իմոյ լինել հաւատարիմ պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյս եւ Դաւանութեան Նորա, լինել հնազանդ իշխանութեան եւ հրամանաց Վեհ. Հայրապետի Ամենայն Հայոց, իրաւանց, կարգադրութեանց եւ հրամանաց Ս. Առաջնորդի վիճակի, չեղանել ի սահմանաց Սահմանադրութեան Առաջնորդական վիճակի Հայոց Ամերիկայի, ծառայել սրտի մտօք ժողովրդեանս:

Եւ եթէ դէպ լիցի կառօքն Ամենաբարձրեալին փոխիլ յաստեացս, ամենայն ինչք եւ ստացուած իմ, եթէ շարժական եւ եթէ անշարժ, եմ եւ կան ի սեփականութիւն Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի (կամ ի սեփականութիւն Միաբանութեան իմոյ).

Ներկայ էաք


Ձեռի Գ. (Վասն Քարոզչաց եւ Հովուաց)

Ի ..... 19

Ի .....

Խոստանամ յանուն Աստուծոյ եւ Փրկչին իմոյ լինել հաւատարիմ պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյս եւ Դաւանութեան Նորա, չչեղիլ ի կարգաց, յընկալեալն ծիսից եւ արարողութեան Նորա, լինել հնազանդ որդի Վեհ. Հայրապետի Ամենայն Հայոց, լինել հնազանդ իրաւանց, կարգադրութեաց եւ հրամանաց Ս. Առաջնորդի վիճակիս եւ չեղանել իւրիք ի սահմանաց հաստատեալ Սահմանադրութեան, ծառայել ըստ խղնի մտացս ժողովրդեանս, անխարդախ հոգւով, ուղղամիտ խղնիս եւ առանց ակնառութեան իւրիք:

Ներկայ էաք  
Հոգաբարձութիւն



ՄՄ Հայագիտական գրա



MAI 01184

